

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1983 թվականի հունիսի 13-ի ՅՈԹԵՐՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին՝ հիմնված Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա

(83/349/ԵՏՀ)

(ՊՏ L 193, 18.07.1983թ., էջ 1)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 89/666/ԵՏՀ տասնմեկերորդ հրահանգով	21-ի L 395	36	30.12.1989թ.
►M2	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 90/604/ԵՏՀ հրահանգով	8-ի L 317	57	16.11.1990թ.
►M3	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 90/605/ԵՏՀ հրահանգով	8-ի L 317	60	16.11.1990թ.
►M4	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի 2001/65/ԵՀ հրահանգով	L 283	28	27.10.2001թ.
►M5	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 18-ի 2003/51/ԵՀ հրահանգով	L 178	16	17.07.2003թ.
►M6	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 17-ի 2006/43/ԵՀ հրահանգով	L 157	87	09.06.2006թ.
►M7	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հունիսի 14-ի 2006/46/ԵՀ հրահանգով	L 224	1	16.08.2006թ.
►M8	Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 2006/99/ԵՀ հրահանգով	L 363	137	20.12.2006թ.
►M9	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի 2009/49/ԵՀ հրահանգով	L 164	42	26.06.2009թ.

Փոփոխված՝

►A1	Բսպանիայի և Պորտուգալիայի անդամակցության մասին ակտով	L 302	23	15.11.1985թ.
-----	--	-------	----	--------------

▶A2	Ավստրիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության մասին ակտով	C 241	21	29.08.1994թ.
	(լրամշակված՝ Խորհրդի 95/1/ԵՀ որոշմամբ, Եվրատոմ, ԱՊԵՀ)	L 001	1	..
▶A3	Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների վերաբերյալ ակտով և այն պայմանագրերի լրամշակումներով, որոնց վրա հիմնված է Եվրոպական միությունը	L 236	33	23.09.2003թ.

Ուղղված՝

▶C1 Ուղղումով, ՊՏ L 211, 03.08.1983թ., էջ 31 (83/349)

Ծանոթագրություն. Սույն համախմբված տարբերակը հղումներ է պարունակում Եվրոպական հաշվարկային միավորին և (կամ) ԵԱՄ-ին, որոնք 1999 թվականի հունվարի 1-ից պետք է հասկացվեն որպես հղումներ եվրոյին. Խորհրդի թիվ 3308/80 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 345, 20.12.1980թ., էջ 1) և Խորհրդի թիվ 1103/97 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 162, 19.06.1997թ., էջ 1):

▼B

ԽՈՐՀՐԴԻ 1983 թվականի հունիսի 13-ի ՅՈԹԵՐՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին՝ հիմնված Պայմանագրի 54(3)(Է) հոդվածի վրա

(83/349/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 54(3)(Է) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ⁽¹⁾,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ 1978 թվականի հուլիսի 25-ին Խորհուրդն ընդունեց որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները կարգավորող ազգային օրենսդրությունների համաձայնեցման մասին 78/660/ԵՏՀ հրահանգը (4), և քանի որ շատ ընկերություններ կազմակերպությունների խմբերի մասնակիցներ են, և քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է այնպես կազմվեն, որ հնարավոր լինի կազմակերպությունների նման խմբերի վերաբերյալ տեղեկությունները հաղորդել մասնակիցներին ու երրորդ անձանց, և քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարգավորող ազգային օրենսդրությունները, ըստ այդմ, պետք է համաձայնեցվեն՝ իրագործելու համար այն տեղեկությունների համեմատելիությունն ու համարժեքությունն ապահովելու նպատակները, որ ընկերությունները պետք է հրապարակեն Համայնքի տարածքում,

►C1 քանի որ համախմբման պայմանները որոշելիս պետք է հաշվի առնվեն ոչ միայն այն դեպքերը ◀, երբ վերահսկողության լիազորությունը հիմնված է ձայնի իրավունքների մեծամասնության վրա, այլ նաև այն դեպքերը, երբ այն հիմնված է համաձայնությունների վրա, եթե դրանք թույլատրվում են, և քանի որ, բացի դրանից, այն անդամ պետություններին, որտեղ առաջանում է այդ հնարավորությունը, պետք է թույլատրվի կարգավորել այն դեպքերը, երբ որոշ հանգամանքներում վերահսկողությունն արդյունավետորեն իրականացվել է փոքրամասնություն կազմող բաժնեմասի նկատմամբ սեփականության հիման վրա, և քանի որ անդամ պետություններին պետք է թույլատրվի կարգավորել այն դեպքերը, երբ կազմակերպությունների խմբերում կազմակերպությունների առկայությունը հիմնված է միմյանց նկատմամբ հավասար պայմանների վրա,

քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենսդրությունների համաձայնեցման նպատակը կանոնադրական կապիտալով ընկերություններում ունեցած շահերը պաշտպանելն է, և քանի որ նման պաշտպանությունը ենթադրում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքը, եթե այդ ընկերությունը կազմակերպությունների խմբի մասնակից է, և քանի որ նման ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն առնվազն այն դեպքում, երբ նման ընկերությունը մայր կազմակերպություն է, և քանի որ, բացի դրանից, լիարժեք տեղեկատվության անհրաժեշտությունը նաև պահանջում է, որ դուստր կազմակերպությունը, որն ինքը մայր կազմակերպություն է, կազմի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, և քանի որ, չնայած դրան, նման մայր կազմակերպությունը կարող է և, որոշ հանգամանքներում, պետք է ազատվի նման համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու պարտականությունից՝ պայմանով, որ նրա մասնակիցներն ու երրորդ անձինք բավարար չափով պաշտպանված են,

քանի որ որոշակի չափը չգերազանցող կազմակերպությունների խմբերի համար համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու պարտականությունից ազատումը կարող է հիմնավորված լինել, և քանի որ, համապատասխանաբար, նման պարտականությունից ազատման համար պետք է սահմանվեն առավելագույն սահմանաչափեր, և քանի որ դրանից հետևում է, որ անդամ պետությունները կարող են նախատեսել, որ երեք չափորոշիչից միայն մեկի սահմանազանցումը բավարար է, որ պարտականությունից ազատումը չկիրառվի, կամ էլ ընդունել Հրահանգով սահմանվածից ցածր սահմանաչափեր,

քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է արտացոլեն համախմբված բոլոր կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ակտիվների ու

պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի ու վնասի ճշմարիտ ու իրական պատկերը, և քանի որ, ըստ այդմ, համախմբումը սկզբունքորեն պետք է ներառի բոլոր այդ կազմակերպությունները, և քանի որ նման համախմբումը պահանջում է այդ կազմակերպությունների ակտիվների ու պարտավորությունների և եկամուտների ու ծախսերի ամբողջական միավորում և նման խմբերում չընդգրկված անձանց շահերի առանձին բացահայտում, և քանի որ, բոլոր դեպքերում, համախմբված կազմակերպությունների միջև ֆինանսական հարաբերությունների հետևանքները բացառելու համար պետք է կատարվեն անհրաժեշտ ճշտումներ,

քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ու նման հաշվետվությունների համատեքստում գնահատման վերաբերյալ պետք է ամրագրվեն մի շարք սկզբունքներ՝ ապահովելու համար, որ հողվածները բացահայտվեն հետևողականորեն, ինչպես նաև հնարավոր լինի դրանց հեշտ համեմատումը՝ ոչ միայն դրանց գնահատման համար գործածված մեթոդների առումով, այլև այն ժամանակահատվածների առումով, որոնց վերաբերում են ֆինանսական հաշվետվությունները,

քանի որ, համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների կողմից զգալի ազդեցության ենթարկվող կազմակերպությունների կապիտալում մասնակցության մասնաբաժինը պետք է համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառվի՝ բաժնեմասնակցության մեթոդի կիրառմամբ,

քանի որ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է ներկայացվեն համախմբման ենթակա կազմակերպությունների տվյալները,

քանի որ 78/660/ԵՏՀ հրահանգում սկզբնապես նախատեսված որոշակի ժամանակավոր շեղումները կարող են ուժի մեջ մնալ՝ հետագա վերանայման պայմանով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ 1

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու պայմանները

Հոդված 1

1. Անդամ պետությունն այն կազմակերպություններից, որոնց վրա տարածվում է իր ազգային իրավունքը, պահանջում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ և համախմբված տարեկան զեկույց կազմել, եթե այդ կազմակերպությունը (մայր կազմակերպությունը).

ա) մեկ այլ կազմակերպությունում (դուստր կազմակերպությունում) ունի բաժնետերերի կամ մասնակիցների ձայնի իրավունքների մեծամասնությունը կամ

բ) իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մեկ այլ կազմակերպության (դուստր կազմակերպության) վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամների մեծամասնությանը և միաժամանակ, այդ կազմակերպության բաժնետերն է կամ մասնակիցը, կամ

գ) իրավունք ունի գերիշխող ազդեցություն գործելու որևէ կազմակերպության (դուստր կազմակերպության) վրա, որի բաժնետեր կամ մասնակից է՝ այդ կազմակերպության հետ կնքված պայմանագրի կամ դրա հիմնադիր պայմանագրի կամ կանոնադրության որևէ դրույթի համաձայն, եթե այդ դուստր կազմակերպության վրա տարածվող իրավունքով թույլատրվում է դրա նկատմամբ նման պայմանագրերի կամ դրույթների կիրառումը:

Անդամ պետությունը կարող է չսահմանել, որ մայր կազմակերպությունը պետք է իր դուստր կազմակերպության բաժնետեր կամ մասնակից լինի: Այն անդամ պետություններից, որոնց իրավական ակտերով նման պայմանագրեր կամ դրույթներ չեն նախատեսվում, չի պահանջվում կիրառել սույն դրույթը, կամ

դ) որևէ կազմակերպության բաժնետեր կամ մասնակից է, և

աա) այդ կազմակերպության (դուստր կազմակերպության) վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամների մեծամասնությունը, ով պաշտոնավարել է այդ ֆինանսական տարվա ընթացքում, նախորդ ֆինանսական տարվա ընթացքում և մինչ այն պահը, երբ կազմվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունները, նշանակվել են միայն նրա ձայնի իրավունքների իրականացման արդյունքում կամ

բբ) այդ կազմակերպության (դուստր կազմակերպության) այլ բաժնետերերի կամ մասնակիցների հետ ձեռք բերած համաձայնությանը համապատասխան՝ միայնակ վերահսկում է այդ կազմակերպությունում բաժնետերերի ու մասնակիցների ձայնի իրավունքների մեծամասնությունը: Անդամ պետությունները կարող են նման համաձայնությունների ձևի և բովանդակության վերաբերյալ ավելի մանրամասն դրույթներ սահմանել:

Անդամ պետությունները պետք է սահմանեն առնվազն վերը նշված (բբ)–ում նշված կարգավորումները:

Նրանք վերը նշված (աա)–ի կիրառումը կարող են պայմանավորել այն հանգամանքով, որ սեփականության օբյեկտը ներկայացնի բաժնետերերի կամ մասնակիցների ձայնի իրավունքների 20 տոկոսը կամ ավելին:

Այնուամենայնիվ, վերը նշված (աա)–ն չի կիրառվում, եթե մեկ այլ կազմակերպություն այդ դուստր կազմակերպության նկատմամբ վերը նշված (ա)–ում, (բ)–ում կամ (գ)–ում նշված իրավունքներն ունի:

▼M5

2. Բացի 1–ին պարբերությունում նշված դեպքերից՝ անդամ պետությունները ցանկացած կազմակերպությունից, որի վրա տարածվում է իրենց ազգային իրավունքը, կարող են պահանջել կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ և համախմբված տարեկան զեկույց, եթե

ա) այդ կազմակերպությունը (մայր կազմակերպությունը) իրավունք ունի գործելու կամ փաստացի գործում է, ունի գերիշխող ազդեցություն կամ իրականացնում է վերահսկողություն մեկ այլ կազմակերպության (դուստր կազմակերպության) նկատմամբ կամ

բ) այդ կազմակերպությունը (մայր կազմակերպությունը) և մեկ այլ կազմակերպություն (դուստր կազմակերպությունը) միասնական կերպով կառավարվում են մայր կազմակերպության կողմից:

▼B

Հոդված 2

1. 1(1)(ա), (բ) և (դ) հոդվածի նպատակներից ելնելով՝ որևէ այլ դուստր կազմակերպության, ինչպես նաև իր անունից, սակայն ի շահ մայր կազմակերպության կամ այլ դուստր կազմակերպության գործող ցանկացած անձի ձայնի իրավունքները և նշանակումներ կամ

ազատումներ կատարելու իրավունքը պետք է գումարվեն մայր կազմակերպության համապատասխան իրավունքներին:

2. 1(1)(ա), (բ) և (դ) հոդվածների նպատակներից ելնելով՝ վերը նշված 1-ին պարբերությունում նշված իրավունքները չպետք է ներառեն.

ա) այն բաժնետոմսերով շնորհվող իրավունքները, որոնք տիրապետվում են այն անձի անունից, որը ոչ մայր կազմակերպությունը, ոչ էլ դրա դուստր կազմակերպությունն է,

բ) պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող բաժնետոմսերով շնորհվող իրավունքները՝ պայմանով, որ տվյալ իրավունքներն իրականացվում են ստացված ցուցումների համաձայն, կամ բնականոն գործարար գործունեության մաս կազմող փոխառությունների տրամադրման կապակցությամբ պատկանող բաժնետոմսերով շնորհվող իրավունքները՝ պայմանով, որ ձայնի իրավունքներն իրականացվում են ապահովման միջոցը տրամադրող անձի շահերից ելնելով:

3. 1(1)(ա) և (դ) հոդվածի նպատակներից ելնելով՝ դուստր կազմակերպությունում բաժնետերերի ու մասնակիցների ձայնի իրավունքների ընդհանուր թիվը պետք է նվազեցվի այդ իսկ կազմակերպության, այդ կազմակերպության դուստր կազմակերպության կամ իր անունից, սակայն ի շահ այդ կազմակերպությունների գործող անձին պատկանող բաժնետոմսերով շնորհվող իրավունքներով:

Հոդված 3

1. Չհակասելով ►M5 13-րդ և 15-րդ հոդվածներին՝ ◀ մայր կազմակերպությունը և դրա բոլոր դուստր կազմակերպությունները համախմբման ենթակա կազմակերպություններ են՝ անկախ այդ դուստր կազմակերպությունների գտնվելու վայրերից:

2. Վերը նշված 1-ին պարբերության նպատակներից ելնելով՝ ցանկացած դուստր կազմակերպության դուստր կազմակերպություն համարվում է այն մայր կազմակերպության դուստր կազմակերպությունը, որը համախմբման ենթակա կազմակերպությունների մայր կազմակերպությունն է:

▼B

Հոդված 4

1. Սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ մայր կազմակերպությունը և դրա բոլոր դուստր կազմակերպությունները համախմբման ենթակա կազմակերպություններ են, եթե մայր կազմակերպությունը կամ մեկ կամ մի քանի դուստր կազմակերպություններ հիմնադրվել են որպես ընկերության հետևյալ տեսակներից որևէ մեկը.

ա) *Գերմանիայում՝*

die Aktiengesellschaft, die Kommanditgesellschaft auf Aktien, die Gesellschaft mit beschränkter Haftung.

բ) *Բելգիայում՝*

la société anonyme / de naamloze vennootschap — la société en commandite par actions / de commanditaire vennootschap op aandelen — la société de personnes à responsabilité limitée / de personenvennootschap met beperkte aansprakelijkheid.

գ) *Դանիայում՝*

aktieselskaber, kommanditaktieselskaber, anpartsselskaber.

η) *Φρανσική εταιρεία*

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée.

ε) *Ζωώνυμη εταιρεία*

η ανώνυμη εταιρεία, η εταιρεία περιορισμένης ευθύνης, η ετερόρρυθμη κατά μετοχές εταιρεία.

ρ) *Επιχειρηματική εταιρεία*

public companies limited by shares or by guarantee, private companies limited by shares or by guarantee.

ε) *Επιχειρηματική εταιρεία*

la società per azioni, la società in accomandita per azioni, la società a responsabilità limitata.

ρ) *Επιχειρηματική εταιρεία*

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée.

ρ) *Άδηλη εταιρεία*

de naamloze vennootschap, de besloten vennootschap met beperkte aansprakelijkheid.

δ) *Επιχειρηματική εταιρεία περιορισμένης ευθύνης*

public companies limited by shares or by guarantee, private companies limited by shares or by guarantee.

▼A1

δω) *Επιχειρηματική εταιρεία*

la sociedad anónima, la sociedad comanditaria por acciones, la sociedad de responsabilidad limitada.

δρ) *Ανώνυμη εταιρεία*

a sociedade anónima de responsabilidade limitada, a sociedade em comandita por acções, a sociedade por quotas de responsabilidade limitada.

▼

δρ) *Ανώνυμη εταιρεία*

die Aktiengesellschaft, die Gesellschaft mit beschränkter Haftung.

δρ) *Ανώνυμη εταιρεία*

osakeyhtiö/aktiebolag.

δε) *Ανώνυμη εταιρεία*

aktiebolag.

▼A3

δρ) *Ανώνυμη εταιρεία*

společnost s ručením omezeným, akciová společnost.

ժէ) *Էստոնիայում*՝

aktsiaselts, osaühing.

ժը) *Գիպրոսում*՝

Δημόσιες εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση, ιδιωτικές εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση.

ժթ) *Լատվիայում*՝

akciju sabiedrība, sabiedrība ar ierobežotu atbildību.

ի) *Լիտվայում*՝

akcinės bendrovės, uždarosios akcinės bendrovės.

իա) *Հունգարիայում*՝

részvénytársaság, korlátolt felelősségű társaság.

իբ) *Մալթայում*՝

kumpanija publika —public limited liability company, kumpanija privata —private limited liability company,

soċjeta in akkomandita bil-kapital maqsum f'azzjonijiet —partnership *en commandite* with the capital divided into shares.

իզ) *Լեհաստանում*՝

spółka akcyjna, spółka z ograniczoną odpowiedzialnością, spółka komandytowo-akcyjna.

ին) *Սլովենիայում*՝

delniška družba, družba z omejeno odgovornostjo, komanditna delniška družba.

իե) *Սլովակիայում*՝

akciová spoločnosť, spoločnosť s ručením obmedzeným.

▼M8

իզ) *Ռուդարիայում*՝

акционерно дружество, дружество с ограничена отговорност, командитно дружество с акции.

իէ) *Ռումինիայում*՝

societate pe acțiuni, societate cu răspundere limitată, societate în comandită pe acțiuni:

▼M3

Առաջին ենթապարբերությունը կիրառվում է նաև այն դեպքում, երբ մայր կազմակերպությունը կամ դուստր կազմակերպություններից մեկը կամ մի քանիսը հիմնադրվել են որպես 78/660/ԵՏՀ հրահանգի 1(1) հոդվածի երկրորդ կամ երրորդ ենթապարբերությունում նշված ընկերության տեսակներից մեկը:

2. Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից ազատել, եթե մայր կազմակերպությունը չի հիմնադրվել որպես սույն

Հրահանգի 4(1) հոդվածում կամ 78/660/ԵՏՀ հրահանգի 1(1) հոդվածի երկրորդ կամ երրորդ ենթապարբերությունում նշված ընկերության տեսակներից որևէ մեկը:

▼B

Հոդված 5

1. Անդամ պետությունը կարող է 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից ազատել, եթե մայր կազմակերպությունը ֆինանսական հոլդինգային ընկերություն է, ինչպես սահմանված է 78/660/ԵՏՀ հրահանգի 5(3) հոդվածով, և

- ա) ֆինանսական տարվա ընթացքում այն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի միջամտել դուստր կազմակերպության կառավարմանը.
 - բ) դուստր կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամ նշանակելու առումով այն չի իրականացրել մասնակցության մասնաբաժնով շնորհվող ձայնի իրավունքները ֆինանսական տարվա կամ նախորդ հինգ ֆինանսական տարիների ընթացքում, կամ երբ ձայնի իրավունքներն անհրաժեշտ է եղել իրականացնել դուստր կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինների գործունեության համար, ձայնի իրավունքների մեծամասնությունն ունեցող՝ մայր կազմակերպության ոչ մի բաժնետեր կամ մասնակից կամ այդ կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինների անդամ կամ դրա՝ ձայնի իրավունքների մեծամասնությունն ունեցող մասնակիցը դուստր կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինների անդամ չէ, և այդ մարմինների՝ այդպես նշանակված անդամներն իրենց գործառնություններն իրականացրել են առանց մայր կազմակերպության կամ դրա դուստր կազմակերպություններից որևէ մեկի կողմից որևէ միջամտության կամ ազդեցության.
 - գ) այն փոխառություններ է տրամադրել միայն այն կազմակերպություններին, որոնցում այն մասնակցության մասնաբաժին ունի: Եթե նման փոխառություններ են տրամադրվել այլ անձանց, դրանք պետք է վերադարձված լինեն մինչև նախորդ ֆինանսական տարվա ավարտը, և
 - դ) ազատումը շնորհվում է վարչական մարմնի կողմից՝ վերը նշված պայմանների իրականացումն ստուգելուց հետո:
2. ա) Եթե ֆինանսական հոլդինգային ընկերությունն ազատվել է պարտականությունից, 78/660/ԵՏՀ հրահանգի 43(2) հոդվածը չի կիրառվում դրա տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ՝ դուստր կազմակերպությունների բաժնեմասի մեծ մասի նկատմամբ սեփականության առումով՝ սկսած 49(2) հոդվածով նախատեսված ամսաթվից:
- բ) 78/660/ԵՏՀ հրահանգի 43(1) հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ բաժնեմասի մեծ մասի նկատմամբ սեփականության առումով բացահայտումները կարող են բաց թողնվել, եթե դրանց բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են լրջորեն վնասել ընկերությանը, դրա բաժնետերերին կամ մասնակիցներին, կամ դրա դուստր կազմակերպություններից որևէ մեկին: Անդամ պետությունը կարող է սահմանել, որ նման բացթողումների համար վարչական կամ դատական կարգով նախապես տրված թույլտվություն է անհրաժեշտ: Ցանկացած նման բացթողում պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 6

1. Չհակասելով 4(2) և 5-րդ հոդվածներին՝ անդամ պետությունը կարող է նախատեսել 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից ազատում, եթե մայր կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի կազմման ամսաթվի դրությամբ համախմբման ենթակա կազմակերպությունները միասին, ըստ դրանց վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների, չեն գերազանցում 78/660/ԵՏՀ հրահանգի 27-րդ հոդվածով ամրագրված երեք չափորոշիչից երկուսի սահմանաչափերը:
2. Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլատրել, որ 19(1) հոդվածում նշված հաշվանցումը և 26(1)(ա) ու (բ) հոդվածում նշված բացառումը վերը նշված սահմանաչափերը հաշվարկելիս չկատարվեն: Այդ դեպքում հաշվապահական հաշվեկշռի ընդհանուր մնացորդի և գուտ շրջանառության չափորոշիչների սահմանաչափերն ավելացվում են 20 տոկոսով:
3. 78/660/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածը կիրառվում է վերը նշված չափորոշիչների նկատմամբ:

▼M5

4. Սույն հոդվածը չի կիրառվում, եթե համախմբման ենթակա կազմակերպություններից որևէ մեկն այնպիսի ընկերություն է, որի արժեթղթերի վաճառքը թույլատրվում է որևէ անդամ պետության «Արժեթղթերի ոլորտում ներդրումային ծառայությունների մասին» Խորհրդի 1993 թվականի մայիսի 10-ի 93/22/ԵՏՀ հրահանգի (5) 1(13) հոդվածի իմաստով կարգավորվող շուկայում:

▼B

Հոդված 7

1. Անկախ 4(2), 5-րդ և 6-րդ հոդվածներից՝ անդամ պետությունը ցանկացած մայր կազմակերպության, որի վրա տարածվում է իր ազգային իրավունքը և որը նաև դուստր կազմակերպություն է, ազատում է 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից, եթե դրա մայր կազմակերպության վրա տարածվում է անդամ պետության իրավունքը հետևյալ երկու դեպքում՝
 - ա) եթե այդ մայր կազմակերպությանը պատկանում են պարտականությունից ազատված կազմակերպության բոլոր բաժնետոմսերը: Այդ կազմակերպությունում օրենքով կամ հիմնադիր պայմանագրով կամ կանոնադրությամբ սահմանված պարտավորությանը համապատասխան՝ դրա վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինների անդամներին պատկանող բաժնետոմսերը հաշվի չեն առնվում այդ նպատակով, կամ
 - բ) եթե տվյալ մայր կազմակերպությանը պատկանում են պարտականությունից ազատված կազմակերպության բաժնետոմսերի 90 տոկոսը կամ ավելին, և այդ կազմակերպության մնացած բաժնետերերը կամ մասնակիցները հավանություն են տվել պարտականությունից ազատմանը:

▼M5

▼B

2. Պարտականությունից ազատումը պետք է պայմանավորված լինի հետևյալ բոլոր պայմանների կատարմամբ՝

ա) պարտականությունից ազատված կազմակերպությունը և, չհակասելով 13-րդ և 15-րդ հոդվածներին, դրա բոլոր դուստր կազմակերպությունները պետք է համախմբվեն կազմակերպությունների ավելի մեծ խմբի ֆինանսական հաշվետվություններում, որի մայր կազմակերպության վրա տարածվում է անդամ պետության իրավունքը:

բ) աա) վերը նշված (ա)–ում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և կազմակերպությունների ավելի մեծ խմբի համախմբված տարեկան զեկույցը պետք է կազմվեն այդ խմբի մայր կազմակերպության կողմից և աուդիտի ենթարկվեն՝ այն անդամ պետության իրավունքին համապատասխան, որը տարածվում է կազմակերպությունների այդ ավելի մեծ խմբի մայր կազմակերպության վրա՝ սույն Հրահանգին համապատասխան:

բբ) վերը նշված (ա)–ում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և վերը նշված (աա)–ում նշված համախմբված տարեկան զեկույցը, այդ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձի կողմից ներկայացվող զեկույցը և, ըստ անհրաժեշտության, 9–րդ հոդվածում նշված հավելվածը պետք է հրապարակվեն պարտականությունից ազատված կազմակերպության համար՝ այն անդամ պետության իրավունքով սահմանված կարգով, որը տարածվում է այդ կազմակերպության վրա՝ 38–րդ հոդվածին համապատասխան:

Այդ անդամ պետությունը կարող է պահանջել, որ այդ փաստաթղթերը հրապարակվեն նրա պաշտոնական լեզվով, և որ թարգմանությունը վավերացվի:

գ) պարտականությունից ազատված կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է բացահայտվի:

աա) այն մայր կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, որը կազմում է վերը նշված (ա)–ում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, և

բբ) համախմբված ֆինանսական հաշվետվություններ ու համախմբված տարեկան զեկույց կազմելու պարտականությունից ազատումը:

▼M5

3. Սույն հոդվածը չի կիրառվում այնպիսի ընկերությունների նկատմամբ, որոնց արժեթղթերի վաճառքը թույլատրվում է որևէ անդամ պետության՝ 93/22/ԵՏՀ հրահանգի 1(13) հոդվածի իմաստով կարգավորվող շուկայում:

▼B

Հոդված 8

1. 7(1) հոդվածով չկարգավորվող դեպքերում, անդամ պետությունը կարող է, չհակասելով 4(2), 5–րդ և 6–րդ հոդվածներին, 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից ազատել ցանկացած մայր կազմակերպության, որի վրա տարածվում է իր ազգային իրավունքը, որը նաև դուստր կազմակերպություն է, և որի մայր կազմակերպության վրա տարածվում է անդամ պետության իրավունքը, եթե 7(2) հոդվածով սահմանված բոլոր պայմանները կատարված են, և եթե պարտականությունից ազատված կազմակերպության բաժնետերերը կամ մասնակիցները, որոնց պատկանում է այդ կազմակերպության տեղաբաշխված կապիտալի նվազագույն մասնաբաժինը, չեն պահանջել համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում՝ ֆինանսական տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Անդամ պետությունները սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների և կանոնադրական կապիտալով վստահության վրա հիմնված ընկերակցությունների համար

կարող են այդ մասնաբաժինը սահմանել առավելագույնը՝ 10 տոկոս, իսկ այլ տեսակի կազմակերպությունների համար՝ առավելագույնը 20 տոկոս:

2. Անդամ պետությունը չի կարող որպես պարտականությունից ազատման պայման սահմանել այն, որ 7(2)(ա) հոդվածում նկարագրված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմող մայր կազմակերպության վրա նույնպես պետք է տարածվի իր ազգային իրավունքը:

3. Անդամ պետությունը չի կարող պարտականությունից ազատումը պայմանավորել 7(2)(ա) հոդվածում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմմանը և աուդիտին առնչվող պայմանների կատարմամբ:

Հոդված 9

1. Անդամ պետությունը կարող է 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված պարտականությունից ազատումները պայմանավորել լրացուցիչ տեղեկությունների բացահայտմամբ 7(2)(ա) հոդվածում նշված համախմբված ֆինանսական հաշվետվություններում կամ դրա հավելվածում՝ սույն Հրահանգին համապատասխան, եթե այդ տեղեկությունները պահանջվում են այն կազմակերպություններից, որոնց վրա տարածվում է այդ անդամ պետության ազգային իրավունքը, և որոնք պարտավոր են կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ ու գտնվում են միևնույն պայմաններում:

2. Անդամ պետությունը կարող է նաև պարտականությունից ազատումը պայմանավորել 7(2)(ա) հոդվածում նշված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում կամ պարտականությունից ազատված կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվություններում հետևյալ տեղեկությունների ամբողջությամբ կամ մասամբ բացահայտմամբ՝ այն կազմակերպությունների խմբի վերաբերյալ, որոնց մայր կազմակերպությանն այն ազատում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու պարտականությունից.

- հիմնական միջոցների չափը,
- զուտ շրջանառությունը,
- ֆինանսական տարվա շահույթը կամ վնասը և կապիտալի ու պահուստների չափը,
- ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը:

Հոդված 10

7–9-րդ հոդվածները չեն ազդում որևէ անդամ պետության՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ կամ համախմբված տարեկան զեկույցներ կազմելու վերաբերյալ օրենսդրության վրա՝ այնքանով, որքանով այդ փաստաթղթերը պահանջվում են՝

- աշխատողներին իրենց ներկայացուցիչների մասին տեղեկատվություն կամ
- վարչական կամ դատական մարմնի կողմից սեփական նպատակների համար:

Հոդված 11

1. Չհակասելով 4(2), 5-րդ և 6-րդ հոդվածներին՝ անդամ պետությունը 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից կարող է ազատել ցանկացած մայր կազմակերպության,

որի վրա տարածվում է իր ազգային իրավունքը, և որը նաև այն մայր կազմակերպության դուստր կազմակերպությունն է, որի վրա չի տարածվում որևէ անդամ պետության իրավունքը, եթե կատարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) պարտականությունից ազատված կազմակերպությունը և, չհակասելով ►M5 13-րդ և 15-րդ հոդվածներին, դրա բոլոր դուստր կազմակերպությունները պետք է համախմբվեն կազմակերպությունների ավելի մեծ խմբի ֆինանսական հաշվետվություններում:

բ) վերը նշված (ա)-ում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և, ըստ անհրաժեշտության, համախմբված տարեկան զեկույցը պետք է կազմվեն սույն Հրահանգին համապատասխան կամ սույն Հրահանգին համապատասխան կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններին և համախմբված տարեկան զեկույցներին համարժեք կարգով:

գ) վերը նշված (ա)-ում նշված՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկված լինեն մեկ կամ մի քանի անձանց կողմից, որոնք ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու իրավասություն ունեն՝ համաձայն այն ազգային իրավունքի, որը տարածվում է դրանք կազմած կազմակերպության վրա:

2. Կիրառվում են 7(2)(բ)(բբ) ու (գ) և 8-10-րդ հոդվածները:

3. Անդամ պետությունը կարող է սույն հոդվածի համաձայն պարտականությունից ազատում նախատեսել միայն, եթե այն նախատեսում է պարտականությունից միևնույն ազատումները՝ համաձայն 7-10-րդ հոդվածների:

Հոդված 12

1. Չհակասելով 1-10-րդ հոդվածներին՝ անդամ պետությունը ցանկացած կազմակերպությունից, որի վրա տարածվում է իր ազգային իրավունքը, կարող է պահանջել կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ և համախմբված տարեկան զեկույց, եթե

ա) այդ կազմակերպությունը և մեկ կամ մի քանի այլ կազմակերպություններ, որոնց հետ այն կապված չէ, ինչպես նկարագրված է 1(1) կամ (2) հոդվածում, կառավարվում են միասնական կերպով՝ համաձայն այդ կազմակերպության հետ կնքված պայմանագրի կամ այդ կազմակերպությունների հիմնադիր պայմանագրի կամ կանոնադրության դրույթների կամ

բ) այդ կազմակերպության և մեկ կամ մի քանի այլ կազմակերպությունների, որոնց հետ այն կապված չէ, ինչպես նկարագրված է 1(1) կամ (2) հոդվածում, վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմինները հիմնականում բաղկացած են ֆինանսական տարվա ընթացքում և մինչև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմումը պաշտոնավարած անձանցից:

2. Եթե կիրառվում է վերը նշված 1-ին պարբերությունը, այդ պարբերությամբ սահմանված կարգով իրենց բոլոր դուստր կազմակերպությունների հետ կապված կազմակերպությունները պետք է լինեն համախմբման ենթակա կազմակերպություններ, ինչպես սահմանված է սույն Հրահանգով, եթե այդ կազմակերպություններից մեկը կամ մի քանիսը հիմնադրվել են՝ որպես 4-րդ հոդվածում թվարկված ընկերության տեսակներից մեկը:

3. 3-րդ, 4(2), 5-րդ, 6-րդ, 13-28-րդ, 29(1), (3), (4) և (5), 30-38-րդ և 39(2) հոդվածները կիրառվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների և համախմբված տարեկան զեկույցի

նկատմամբ, որոնց վրա տարածվում է սույն հոդվածը, և մայր կազմակերպություններին արված հղումները հասկացվում են որպես հղումներ վերը նշված 1-ին պարբերությունում նշված բոլոր կազմակերպություններին: Այնուամենայնիվ, չհակասելով 19(2) հոդվածին, համախմբված ֆինանսական հաշվետվություններում ընդգրկվող «կապիտալ», «էմիսիոն ֆոնդ», «վերագնահատման պահուստ», «պահուստներ», «հաջորդ ժամանակահատված փոխանցված շահույթ կամ վնաս» և «ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս» հոդվածները պետք է լինեն 1-ին պարբերությունում նշված կազմակերպություններից յուրաքանչյուրին վերագրվող հանրագումարները:

Հոդված 13

1. Կազմակերպությունը կարող է չընդգրկվել համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե դա էական նշանակություն չունի 16(3) հոդվածի նպատակների առումով:

2. Եթե երկու կամ ավելի կազմակերպություններ բավարարում են վերը նշված 1-ին պարբերության պահանջները, դրանք, այնուամենայնիվ, պետք է ընդգրկվեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե, ընդհանուր առմամբ, դրանք էական նշանակություն ունեն 16(3) հոդվածի նպատակների առումով:

▼M9

2ա. Չհակասելով 4(2), 5-րդ և 6-րդ հոդվածների դրույթներին՝ ցանկացած մայր կազմակերպություն, որի վրա տարածվում է անդամ պետության ազգային իրավունքը և որն ունի դուստր կազմակերպություններ, որոնք անհատապես և որպես մեկ ամբողջություն էական նշանակություն չունեն 16(3) հոդվածի նպատակների առումով, ազատվում է 1(1) հոդվածով սահմանված պարտականությունից:

▼B

3. Բացի դրանից՝ կազմակերպությունը կարող է չընդգրկվել համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե

ա) երկարաժամկետ խիստ սահմանափակումներն էականորեն խանգարում են.

աա) մայր կազմակերպությանը այդ կազմակերպության ակտիվների կամ կառավարման նկատմամբ իր իրավունքներն իրականացնելու հարցում կամ

բբ) այդ կազմակերպության միասնական կառավարման իրականացմանը, եթե դա 12(1) հոդվածով սահմանված հարաբերություններից մեկն է, կամ

բ) հնարավոր չէ ձեռք բերել սույն Հրահանգին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար անհրաժեշտ տեղեկությունները առանց անհամաչափ ծախսերի կամ անհարկի ուշացման, կամ

գ) այդ կազմակերպության բաժնետոմսերը պատկանում են բացառապես դրանց հետագա վերավաճառքի նպատակով:

▼M5

▼B

Հոդված 15

1. 16(3) հոդվածի նպատակներից ելնելով՝ անդամ պետությունը կարող է թույլ տալ, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններում չընդգրկվի ցանկացած մայր կազմակերպություն, որն արդյունաբերական կամ առևտրային գործունեություն չի իրականացնում, և որին համախմբված ֆինանսական հաշվետվություններում չընդգրկված մեկ կամ մի քանի կազմակերպությունների հետ համատեղ պայմանավորվածության հիման վրա պատկանում են դուստր կազմակերպության բաժնետոմսեր:
2. Մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունները կցվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին:
3. Այդ շեղումից օգտվելու դեպքում, մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է 78/660/ԵՏՀ հրահանգի 59-րդ հոդվածը, կամ դրա կիրառման արդյունքում առաջացած տեղեկությունները պետք է ներկայացվեն այդ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

ԲԱԺԻՆ 2

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմումը

Հոդված 16

1. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն համախմբված հաշվապահական հաշվեկշռից, ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություններից և հաշվետվություններին կից ծանոթագրություններից: Այդ փաստաթղթերը կազմում են մեկ ամբողջություն:

▼M5

Անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ առաջին ենթապարբերությունում նշված փաստաթղթերից բացի տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներառվեն այլ հաշվետվություններ:

▼B

2. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն հստակ և սույն Հրահանգին համապատասխան:
3. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է ներկայացնեն դրանցում ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի ճշմարիտ ու իրական պատկերը:
4. Եթե սույն Հրահանգի դրույթների կիրառումը բավարար չէ վերը նշված 3-րդ պարբերության իմաստով ճշմարիտ ու իրական պատկեր ապահովելու համար, պետք է տրամադրվեն լրացուցիչ տեղեկություններ:
5. Բացառիկ դեպքերում, եթե 17-35-րդ և 39-րդ հոդվածների որևէ դրույթի կիրառումն անհամատեղելի է վերը նշված 3-րդ պարբերությամբ սահմանված պարտականության հետ, այդ դրույթը պետք է շրջանցվի՝ 3-րդ պարբերության իմաստով ճշմարիտ և իրական պատկեր ապահովելու համար: Նման ցանկացած շրջանցում պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ դրա հիմնավորումների, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի վրա դրա ազդեցության նկարագրության հետ մեկտեղ: Անդամ պետությունները կարող են

սահմանել այդպիսի բացառիկ դեպքերը և ամրագրել համապատասխան հատուկ կանոնները:

6. Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ համախմբված ֆինանսական հաշվետվություններում այլ, ինչպես նաև սույն Հրահանգի համաձայն հրապարակման ենթակա տեղեկությունների բացահայտում:

Հոդված 17

1. ► **M5** 78/660/ԵՏՀ հրահանգի 3-10ա ◀, 13-26-րդ և 28-30-րդ հոդվածները կիրառվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքի առնչությամբ՝ չհակասելով սույն Հրահանգի դրույթներին և հաշվի առնելով տարեկան ֆինանսական հաշվետվությունների համեմատությամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների առանձնահատկություններից բխող էական ճշգրտումները:

2. Անհարկի ծախսերի հանգեցնող հատուկ հանգամանքների առկայության դեպքում անդամ պետությունը կարող է թույլ տալ, որ միջոցները միավորվեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հոդված 18

Համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների ակտիվներն ու պարտավորություններն ամբողջությամբ արտացոլվում են համախմբված հաշվապահական հաշվեկշռում:

Հոդված 19

1. Համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների կապիտալում բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ կազմակերպությունների կապիտալում և պահուստներում նրանց ներկայացրած մասնաբաժնի հետ՝

ա) այդ հաշվանցումն իրականացվում է այդպիսի կազմակերպությունների՝ առաջին անգամ համախմբման մեջ ընդգրկվելու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքների հիման վրա: Նման հաշվանցումներից բխող տարբերությունները համախմբված հաշվապահական հաշվեկշիռներում հնարավորին չափով ուղղակիորեն նշվում են այն հոդվածների դիմաց, որոնց արժեքները գերազանցում են դրանց հաշվեկշռային արժեքները կամ պակաս են դրանցից:

բ) անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ հաշվանցումներ՝ բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթվի դրությամբ, կամ երկու կամ ավելի փուլերով ձեռքբերման դեպքում, կազմակերպության՝ դուստր կազմակերպություն դառնալու ամսաթվի դրությամբ սահմանվող ակտիվների ու պարտավորությունների արժեքների հիման վրա:

գ) (ա)–ի կիրառման արդյունքում կամ (բ)–ի կիրառումից բխող ցանկացած տարբերություն համախմբված հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված: Այդ հոդվածը, կիրառված մեթոդները և նախորդ ֆինանսական տարվան առնչվող զգալի փոփոխությունները պետք է բացատրվեն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Եթե անդամ պետությունը թույլատրում է դրական և բացասական տարբերությունների հաշվանցումը, նման տարբերությունների բացվածքը ևս պետք է ներկայացված լինի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. Այնուամենայնիվ, վերը նշված 1-ին պարբերությունը չի կիրառվում մայր կազմակերպության կապիտալում առկա բաժնետոմսերի նկատմամբ, որոնք այդ կազմակերպությանը կամ համախմբման մեջ ընդգրկված այլ կազմակերպությանն են պատկանում: Համախմբված ֆինանսական հաշվետվություններում նման բաժնետոմսերը համարվում են սեփական բաժնետոմսեր՝ 78/660/ԵՏՀ հրահանգին համապատասխան:

Հոդված 20

1. Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության կապիտալում սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքները հաշվանցվեն միայն կապիտալի համապատասխան տոկոսի հետ՝ պայմանով, որ

ա) սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը ներկայացնում են անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ 77/91/ԵՏՀ հրահանգի (6) 29(2)(ա) հոդվածում նկարագրված բաժնետոմսերի տեսակից բացի, կազմակերպության այլ բաժնետոմսերի՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի առնվազն 90 տոկոսը.

բ) վերը նշված (ա)–ում նշված մասնաբաժինն ապահովվել է պայմանավորվածության համաձայն, որով նախատեսվում է համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության կողմից բաժնետոմսերի թողարկում, և

գ) վերը նշված (բ)–ում նշված պայմանավորվածությունը չի ներառել կանխիկ վճարում՝ թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի 10 տոկոսը գերազանցող չափով:

2. Վերը նշված առաջին պարբերությունից բխող ցանկացած տարբերություն, ըստ անհրաժեշտության, ավելացվում է համախմբված պահուստներին կամ մասհանվում դրանցից:

3. Վերը նշված 1-ին պարբերությունում նկարագրված մեթոդի կիրառությունը, դրա արդյունքում համապատասխան կազմակերպությունների պահուստներում առաջացող տեղաշարժը, կազմակերպությունների անվանումներն ու գտնվելու վայրերը բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 21

Համախմբման մեջ ընդգրկված դուստր կազմակերպություններում համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններից բացի, այլ անձանց պատկանող բաժնետոմսերին վերագրվող գումարն արտահայտվում է համախմբված հաշվապահական հաշվեկշռում՝ որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված:

Հոդված 22

Համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների եկամուտներն ու ծախսերը պետք է ամբողջությամբ արտացոլվեն ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Հոդված 23

Համախմբման մեջ ընդգրկված դուստր կազմակերպություններում համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններից բացի, այլ անձանց պատկանող բաժնետոմսերին վերագրվող շահույթի կամ վնասի չափն արտահայտվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված:

Հոդված 24

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվում են 25–28–րդ հոդվածներում ամրագրված սկզբունքներին համապատասխան:

Հոդված 25

1. Համախմբման մեթոդները պետք է կիրառվեն հետևողականորեն՝ մեկ ֆինանսական տարվանից մյուսը:
2. Վերը նշված 1–ին պարբերության դրույթներից շեղումներ թույլ են տրվում բացառիկ դեպքերում: Ցանկացած նման շեղում պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ինչպես նաև պետք է ներկայացվեն դրա հիմնավորումները՝ համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի վրա դրա ունեցած ազդեցության գնահատման հետ:

▼B

Հոդված 26

1. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, ֆինանսական վիճակը և շահույթը կամ վնասները՝ կարծես այդ կազմակերպությունները մեկ կազմակերպություն են: Մասնավորապես

- ա) համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների միջև գոյություն ունեցող պարտքերն ու պահանջները բացառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններից.
 - բ) համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների միջև իրականացվող գործարքների հետ կապված եկամուտներն ու ծախսերը բացառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններից.
 - գ) եթե համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների միջև իրականացվող գործարքներից առաջացող շահույթն ու վնասները ներառված են ակտիվների հաշվեկշռային արժեքներում, դրանք բացառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններից: Այնուամենայնիվ, մինչև հետագա համաձայնեցումը, անդամ պետությունը կարող է թույլատրել, որ վերը նշված բացառումներն իրականացվեն համախմբման մեջ ընդգրկված դուստր կազմակերպություններից յուրաքանչյուրում մայր կազմակերպությանը պատկանող կապիտալի տոկոսին համապատասխան:
2. Անդամ պետությունը վերը նշված 1(գ) պարբերության դրույթներից շեղումներ կարող է թույլ տալ, եթե գործարք է կնքվել բնականոն շուկայական պայմաններին համապատասխան,

և եթե շահույթի կամ վնասի բացառումը կհանգեցնե՞ր անհարկի ծախսերի: Ցանկացած նման շեղում պետք է բացահայտվի, իսկ եթե համախմբված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի վրա ազդեցությունն էական է, այդ փաստը պետք է բացահայտվի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3. Վերը նշված 1(ա), (բ) կամ (գ) պարբերության դրույթներից շեղումներ թույլ են տրվում, եթե համապատասխան գումարներն էական նշանակություն չունեն՝ 16(3) հոդվածի նպատակների առումով:

Հոդված 27

1. Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելու նույն ամսաթվով:

2. Այնուամենայնիվ, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվեն այլ ամսաթվով՝ համախմբման մեջ ընդգրկված ամենամեծ թվով կամ ամենակարևոր կազմակերպությունների հաշվապահական հաշվեկշիռների ամսաթվերը նկատի ունենալու համար: Այդ շեղումից օգտվելու դեպքում այդ փաստը դրա հիմնավորումների հետ բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնվեն կամ բացահայտվեն համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության ակտիվներին ու պարտավորություններին, ֆինանսական վիճակին կամ շահույթին կամ վնասին առնչվող այն կարևոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել այդ կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի և համախմբված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվերի միջև ընկած ժամանակահատվածում:

3. Եթե կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը երեք ամիսը գերազանցող ժամանակահատվածով նախորդում է համախմբված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին, այդ կազմակերպությունը համախմբվում է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, որոնք կազմվում են համախմբված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով:

Հոդված 28

Եթե համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների կազմը ֆինանսական տարվա ընթացքում ենթարկվել է զգալի փոփոխությունների, համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն այնպիսի տեղեկություններ, որոնք իմաստալից են դարձնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաջորդական խմբերի համեմատությունը: Եթե այդպիսի փոփոխությունը խոշոր է, ապա անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ այդ պարտականությունը կատարվի ճշգրտված սկզբնական հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին ճշգրտված հաշվետվություն կազմելու միջոցով:

▼B

Հոդված 29

▼M4

1. Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ընդգրկվող ակտիվներն ու պարտավորությունները գնահատվում են միասնական մեթոդներով և 78/660/ԵՏՀ հրահանգի 7-րդ և 7ա բաժիններին ու 60-րդ հոդվածին համապատասխան:

▼B

2. ա) Համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող կազմակերպությունը պետք է կիրառի գնահատման նույն մեթոդները, որոնք կիրառում է իր տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Այնուամենայնիվ, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ գնահատման այլ մեթոդների կիրառումը համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ 78/660/ԵՏՀ հրահանգի վերը նշված հոդվածներին համապատասխան:

բ) Այդ շեղումից օգտվելու դեպքում, այդ փաստը բացահայտվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, և ներկայացվում են դրա հիմնավորումները:

3. Եթե համախմբված հաշվետվություններում ընդգրկվող ակտիվներն ու պարտավորությունները գնահատվել են համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների կողմից համախմբման համար կիրառված մեթոդներից տարբեր մեթոդներով, դրանք պետք է վերագնահատվեն համախմբման համար կիրառված մեթոդներին համապատասխան, եթե այդպիսի վերագնահատման արդյունքներն էական նշանակություն չունեն 16(3) հոդվածի նպատակների առումով: Այդ սկզբունքից շրջանցում թույլատրվում է բացառիկ դեպքերում: Այդպիսի ցանկացած շրջանցում բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, և ներկայացվում են դրանց հիմնավորումները:

4. Համախմբված հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում հաշվի է առնվում ֆինանսական տարվա և նախորդ ֆինանսական տարիների համար վճարման ենթակա հարկի և այդ տարիների համար վճարված կամ վճարման ենթակա հարկի գումարի միջև համախմբման ժամանակ առաջացած ցանկացած տարբերություն՝ պայմանով, որ համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններից մեկի համար, ամենայն հավանականությամբ, մոտ ապագայում հարկերի գծով փաստացի վճարման խնդիր կառաջանա:

5. Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում ընդգրկվող ակտիվները բացառիկ հիմունքներով ենթարկվել են արժեքի ճշգրտումների սուկ հարկային նպատակներով, ապա համախմբված ֆինանսական հաշվետվություններում դրանք արտացոլվում են միայն այդ ճշգրտումները բացառելուց հետո: Այնուամենայնիվ, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ այդ ակտիվները համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվեն առանց բացառելու այդ ճշգրտումները՝ պայմանով, որ դրանց չափերը և հիմնավորումները բացահայտվեն համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 30

1. Համախմբման հետևանքով առաջացած դրական տարբերությանը համապատասխանող՝ 19(1)(գ) հոդվածով սահմանված առանձին հոդվածը պետք է դիտարկվի «գուդվիլ» հոդվածի համար 78/660/ԵՏՀ հրահանգով ամրագրված կանոնների համապատասխան:
2. Անդամ պետությունը կարող է թույլ տալ, որ համախմբման արդյունքում առաջացող դրական տարբերությունը անմիջապես և հստակորեն մասհանվի պահուստներից:

Հոդված 31

Որպես 19(1)(գ) հոդվածով սահմանված առանձին հոդված ներկայացված գումարի չափը, որը համապատասխանում է համախմբման հետևանքով առաջացած բացասական տարբերությանը, կարող է փոխանցվել ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն միայն՝

- ա) եթե այդ տարբերությունը համապատասխանում է այդ կազմակերպությունում ձեռքբերման ամսաթվի դրությամբ ապագա անբարենպաստ արդյունքներ ունենալու ակնկալիքին, կամ կազմակերպության կողմից հավանաբար կրվող ծախսերի առաջացման ակնկալիքին այդ ակնկալիքն իրականանալու դեպքում, կամ
- բ) այնքանով, որքանով այդ տարբերությունը համապատասխանում է իրացված շահույթին:

Հոդված 32

1. Եթե համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունն այդ համախմբման մեջ չընդգրկված մեկ կամ մի քանի կազմակերպությունների հետ համատեղ կառավարում է մեկ այլ կազմակերպություն, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ այդ մյուս կազմակերպության ընդգրկումը համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ դրա կապիտալի նկատմամբ համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության ունեցած իրավունքներին համամասնորեն:

2. 13-31-րդ հոդվածները *համապատասխան փոփոխություններով* [*mutatis mutandis*] կիրառվում են վերը նշված 1-ին պարբերությունում նշված համամասնական համախմբման նկատմամբ:

3. Սույն հոդվածի կիրառման դեպքում 33-րդ հոդվածը չի կիրառվում, եթե համամասնորեն համախմբված կազմակերպությունը փոխկապակցված կազմակերպություն է, ինչպես սահմանված է 33-րդ հոդվածով:

Հոդված 33

1. Եթե համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունը զգալի ազդեցություն է գործում համախմբման մեջ չընդգրկված կազմակերպության (փոխկապակցված կազմակերպության) ընթացիկ և ֆինանսական քաղաքականության վրա, որում այն մասնակցության մասնաբաժին ունի, ինչպես սահմանված է 78/660/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով, մասնակցության այդ մասնաբաժինը ներկայացվում է համախմբված հաշվապահական հաշվեկշռում՝ որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված: Կազմակերպությունը համարվում է մեկ այլ կազմակերպության վրա զգալի ազդեցություն գործող, եթե այն տվյալ կազմակերպությունում ունի բաժնետերերի կամ մասնակիցների ձայնի իրավունքների 20 տոկոսը կամ ավելին: Կիրառվում է 2-րդ հոդվածը:

2. Եթե սույն հոդվածն առաջին անգամ է կիրառվում մասնակցության որևէ մասնաբաժնի վրա, որի վրա տարածվում է վերը նշված 1-ին պարբերությունը, այդ մասնակցության մասնաբաժինը ներկայացվում է համախմբված հաշվապահական հաշվեկշռում կամ

ա) իր հաշվեկշռային արժեքով՝ հաշվարկված 78/660/ԵՏՀ հրահանգով սահմանված գնահատման կանոններին համապատասխան: Այդ արժեքի և կապիտալի ու պահուստների՝ մասնակցության այդ մասնաբաժնով ներկայացված մասին համապատասխանող գումարի միջև տարբերությունը պետք է առանձին բացահայտվի համախմբված հաշվապահական հաշվեկշռում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ, երբ այդ մեթոդը կիրառվում է առաջին անգամ, կամ

բ) փոխկապակցված կազմակերպության կապիտալի և պահուստների՝ մասնակցության այդ մասնաբաժնով ներկայացված մասին համապատասխանող գումարով: Այդ գումարի և 78/660/ԵՏՀ հրահանգով սահմանված գնահատման կանոններին համապատասխան հաշվարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը առանձին բացահայտվում է համախմբված հաշվապահական հաշվեկշռում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ, երբ այդ մեթոդը կիրառվում է առաջին անգամ.

գ) անդամ պետությունը կարող է սահմանել վերը նշված (ա)–ից և (բ)–ից որևէ մեկի կիրառումը: Համախմբված հաշվապահական հաշվեկշռում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է նշվի՝ արդյոք կիրառվել է (ա)–ն թե (բ)–ն.

դ) բացի դրանից՝ վերը նշված (ա)–ի և (բ)–ի նպատակներից ելնելով՝ անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ տարբերության հաշվարկումը բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթվի դրությամբ, իսկ դրանց՝ երկու կամ ավելի փուլերով ձեռքբերման դեպքում՝ կազմակերպության՝ փոխկապակցված կազմակերպություն դառնալու ամսաթվի դրությամբ:

3. Եթե փոխկապակցված կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները գնահատվել են 29(2) հոդվածի համաձայն համախմբման համար կիրառվող մեթոդներից բացի, այլ մեթոդներով, դրանք, վերը նշված 2(ա) կամ (բ) պարբերությունում նշված տարբերությունը հաշվարկելու նպատակով, կարող են վերագնահատվել համախմբման համար կիրառվող մեթոդներով: Եթե այդպիսի վերագնահատում չի իրականացվել, այդ փաստը պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Անդամ պետությունը կարող է այդպիսի վերագնահատում պահանջել :

4. Վերը նշված 2(ա) պարբերությունում նշված հաշվեկշռային արժեքը կամ վերը նշված 2(բ) պարբերությունում նշված՝ փոխկապակցված կազմակերպության կապիտալի ու պահուստների մասին համապատասխանող գումարը ավելացվում կամ նվազեցվում է ֆինանսական տարվա ընթացքում փոխկապակցված կազմակերպության կապիտալի և պահուստների՝ մասնակցության այդ մասնաբաժնով ներկայացված մասում տեղի ունեցած որևէ փոփոխության գումարի չափով. այն նվազեցվում է մասնակցության այդ մասնաբաժնի հետ կապված շահութաբաժինների գումարի չափով:

5. Այնքանով, որքանով վերը նշված 2(ա) կամ (բ) պարբերությունում նշված դրական տարբերությունը չի կարող կապված լինել ակտիվների կամ պարտավորությունների որևէ խմբի հետ, այն պետք է դիտարկվի 30-րդ և 39(3) հոդվածներին համապատասխան:

6. Փոխկապակցված կազմակերպությունների՝ նման մասնակցության մասնաբաժիններին վերագրվող շահույթի կամ վնասի չափը ներկայացվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ համապատասխան վերնագրով առանձին հոդվածով:

7. 26(1)(գ) հոդվածում նշված բացառումներն իրականացվում են այնքանով, որքանով փաստերը հայտնի են կամ կարող են հաստատվել: Կիրառվում է 26(2) և (3) հոդվածը:

8. Եթե փոխկապակցված կազմակերպությունը կազմում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ, վերը նշված դրույթները կիրառվում են նման համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող կապիտալի ու պահուստների նկատմամբ:

9. Սույն հոդվածը կարող է չկիրառվել, եթե փոխկապակցված կազմակերպության կապիտալում մասնակցության մասնաբաժինն էական չէ՝ 16(3) հոդվածի նպատակների առումով:

Հոդված 34

Սույն Հրահանգի այլ դրույթներով պահանջվող տեղեկատվությունից բացի, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է տեղեկություններ տրամադրվեն առնվազն հետևյալ հարցերի շուրջ՝

1. համախմբված ֆինանսական հաշվետվություններում տարբեր հոդվածների նկատմամբ կիրառված գնահատման մեթոդները և արժեքի ճշգրտումները հաշվարկելու համար կիրառված մեթոդները: Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված այն հոդվածների դեպքում, որոնք արտահայտված են կամ սկզբնապես արտահայտված էին արտարժույթով, կազմված համախմբված ֆինանսական հաշվետվությունների արժույթով դրանք արտահայտելու համար փոխարկման հիմքերը պետք է բացահայտվեն:

2.

ա) Համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների անվանումներն ու գտնվելու վայրերը. համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններին կամ իրենց անունից, սակայն ի շահ կազմակերպությունների գործող անձանց պատկանող կապիտալի մասը մայր կազմակերպությունից բացի, համախմբման մեջ ընդգրկված այլ կազմակերպություններում. 2-րդ հոդվածի կիրառումից հետո 1-ին և 12(1) հոդվածներում նշված պայմաններից որն է հիմք հանդիսացել համախմբման իրականացման համար: Այնուամենայնիվ, վերջին բացահայտումը կարող է բաց թողնվել, եթե համախմբումն իրականացվել է 1(1)(ա) հոդվածի հիման վրա, և եթե պատկանող կապիտալի մասն ու ձայնի իրավունքների մասը նույնն են.

բ) նույն տեղեկատվությունը պետք է ներկայացվի ► **M5** 13-րդ հոդվածի համաձայն՝ համախմբումից դուրս մնացած կազմակերպությունների առումով, ◀ և պետք է բացատրություն տրվի 13-րդ հոդվածում նշված կազմակերպությունների դուրս մնալու վերաբերյալ:

3.

ա) 33(1) հոդվածում նկարագրված կարգով համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպությունների անվանումներն ու գտնվելու վայրերը և համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությանը կամ իրենց անունից, սակայն ի շահ այդ կազմակերպությունների գործող անձանց պատկանող կապիտալի մասը.

- բ) նույն տեղեկությունները այդ դրույթի կիրառման հիմնավորումների հետ պետք է ներկայացվեն 33(9) հոդվածում նշված փոխկապակցված կազմակերպությունների առնչությամբ:

▼ B

4. 32-րդ հոդվածի համաձայն՝ համամասնորեն համախմբված կազմակերպությունների անվանումներն ու գտնվելու վայրերը, այն գործոնները, որոնց վրա հիմնված է համատեղ կառավարումը, և համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններին կամ իրենց անունից, սակայն ի շահ այդ կազմակերպությունների գործող անձանց պատկանող կապիտալի մասը:
5. Վերը նշված 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված կազմակերպություններից բացի՝ այլ կազմակերպություններից յուրաքանչյուրի անվանումն ու գտնվելու վայրը, որտեղ համախմբման մեջ ընդգրկված կազմակերպություններին ►M5 ————— ◀ ինքնուրույն կամ իրենց անունից, սակայն ի շահ այդ կազմակերպությունների գործող անձանց միջոցով պատկանում է կապիտալի առնվազն այնպիսի տոկոս, որն անդամ պետությունը չի կարող սահմանել 20 տոկոսից ավելի՝ ներկայացնելով կապիտալի պատկանող մասը, կապիտալի ու պահուստների չափը, ինչպես նաև տվյալ կազմակերպության շահույթը կամ վնասը՝ այն վերջին ֆինանսական տարվա կտրվածքով, որի համար ֆինանսական հաշվետվություններ են ընդունվել: Այդ տեղեկատվությունը կարող է բաց թողնվել այն դեպքերում, երբ, 16(3) հոդվածի նպատակների համար, այն միայն աննշան կարևորություն է ներկայացնում: Կապիտալի ու պահուստների և շահույթի կամ վնասի վերաբերյալ տեղեկությունները ևս կարող են բաց թողնվել, եթե տվյալ կազմակերպությունը չի հրապարակում իր հաշվապահական հաշվեկշիռը, և եթե վերը նշված կազմակերպություններին (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) պատկանող կապիտալի մասը պակաս է 50 տոկոսից:
6. Համախմբված հաշվապահական հաշվեկշռում որպես պարտք ներկայացված և ավելի քան հինգ տարի հետո վճարման ենթակա ընդհանուր գումարը, ինչպես նաև համախմբված հաշվապահական հաշվեկշռում որպես պարտք ներկայացված և համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների կողմից տրամադրված արժեքավոր ապահովման միջոցով ծածկված ընդհանուր գումարը՝ նշելով ապահովման միջոցի բնույթն ու ձևը:
7. Համախմբված հաշվապահական հաշվեկշռում չընդգրկված ցանկացած ֆինանսական պարտավորության ընդհանուր չափը այնքանով, որքանով այդ տեղեկություններն օժանդակում են համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատելուն: Կենսաթոշակներին և համախմբման մեջ չընդգրկված փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող պարտավորությունները պետք է առանձին բացահայտվեն:

▼ M7

- 7ա. Համախմբված հաշվապահական հաշվեկշռում չընդգրկված ցանկացած պայմանավորվածության բնույթն ու առևտրային նպատակը և այդ պայմանավորվածությունների ֆինանսական ազդեցությունը՝ պայմանով, որ այդ պայմանավորվածություններից բխող ռիսկերը կամ առավելություններն էական են և այնքանով, որքանով այդպիսի ռիսկերի կամ առավելությունների բացահայտումն անհրաժեշտ է համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ֆինանսական վիճակը գնահատելու համար:
- 7բ. Կապակցված անձանց հետ մայր կազմակերպության կամ համախմբման մեջ ընդգրկված այլ կազմակերպությունների կողմից կնքված գործարքները, բացառությամբ ներխմբային գործարքների ներառյալ այդպիսի գործարքների գումարները, կապակցված անձի հետ ունեցած հարաբերության բնույթը, ինչպես նաև գործարքների մասին այլ

տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ֆինանսական վիճակի մասին պատկերացում կազմելու համար, եթե այդպիսի գործարքներն էական նշանակություն ունեն և չեն կնքվել բնականոն շուկայական պայմաններում: Առանձին գործարքների մասին տեղեկությունները կարող են համատեղ ներկայացվել՝ ելնելով դրանց բնույթից, բացառությամբ, երբ առանձին տեղեկատվությունն անհրաժեշտ է՝ պատկերացում կազմելու համար, թե կապակցված անձի հետ գործարքներն ինչ ազդեցություն են գործել համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ֆինանսական վիճակի վրա:

▼B

8. 78/660/ԵՏՀ հրահանգի 28-րդ հոդվածով սահմանված համախառն գուտ շրջանառությունը՝ բաժանված ըստ գործունեության տեսակների և ըստ աշխարհագրական շուկաների՝ այնքանով, որքանով այդ տեսակները և շուկաներն էապես տարբերվում են միմյանցից հաշվի առնելով, թե ինչպես են կազմակերպվում ապրանքների վաճառքը և ծառայությունների մատուցումը համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության կանոնավոր գործունեության շրջանակներում:
9.
 - ա) Համախմբված կազմակերպություններում ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը՝ ըստ խմբերի, և այդ ֆինանսական տարվա կտրվածքով աշխատակազմի գծով ծախսերը, եթե դրանք առանձին բացահայտված չեն ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:
 - բ) Այն կազմակերպություններում ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը, որոնց նկատմամբ կիրառվել է 32-րդ հոդվածը, բացահայտվում է առանձին:
10. Այն աստիճանը, որով ֆինանսական տարվա համախմբված շահույթի կամ վնասի հաշվարկման վրա ազդել է հոդվածների գնահատումը, որը, 78/660/ԵՏՀ հրահանգի ►M4 31-րդ և 34-42գ հոդվածներով ◀ և սույն Հրահանգի 29(5) հոդվածով ամրագրված սկզբունքներից շեղում կատարելով, կատարվել է տվյալ ֆինանսական տարվա կամ նախորդող որևէ ֆինանսական տարվա ընթացքում՝ հարկային արտոնություն ստանալու նպատակով: Եթե նման գնահատման ազդեցությունը համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության ապագա հարկային վճարների վրա էական է, մանրամասները պետք է բացահայտվեն:
11. Տվյալ ֆինանսական տարվա և նախորդ ֆինանսական տարիների ֆինանսական արդյունքների համախմբված հաշվին փոխանցված հարկի և այդ տարիների կտրվածքով վճարվելիք հարկի գումարի միջև տարբերությունը՝ պայմանով, որ այդ տարբերությունն էական նշանակություն ունի հետագա հարկման նպատակների համար: Այդ գումարը կարող է նաև բացահայտվել հաշվապահական հաշվեկշռում որպես հավաքական գումար՝ ներկայացված համապատասխան վերնագրով առանձին հոդվածի ներքո:
12. Ֆինանսական տարվա կտրվածքով մայր կազմակերպության վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամներին՝ մայր կազմակերպությունում և դրա դուստր կազմակերպություններում իրենց պարտականությունների համար տրված վարձատրության գումարը և այդ մարմինների նախկին անդամների տարիքային կենսաթոշակների հետ կապված՝ նույն պայմաններից բխող կամ նույն պայմաններով ստանձնված ցանկացած պարտավորություն՝ նշելով յուրաքանչյուր խմբի համար ընդհանուր գումարը: Անդամ պետությունը կարող է պահանջել, որ 32-րդ կամ 33-րդ հոդվածում նկարագրված կարգով միմյանց հետ փոխկապակցված կազմակերպություններում ստանձնած պարտականությունների համար տրված

վարձատրությունը ևս ներկայացվի առաջին նախադասության մեջ նշված տեղեկությունների հետ:

13. Մայր կազմակերպության վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամներին այդ կազմակերպության կամ դրա դուստր կազմակերպություններից որևէ մեկի կողմից տրամադրվող կանխավճարների և վարկերի գումարը՝ նշելով տոկոսադրույքները, հիմնական պայմանները և մարված գումարները, ինչպես նաև երաշխիքի ձևով նրանց անունից ստանձնած պարտավորությունները՝ յուրաքանչյուր խմբի համար նշելով ընդհանուր գումարը: Անդամ պետությունը կարող է պահանջել, որ 32–րդ կամ 33–րդ հոդվածում նկարագրված կարգով միմյանց հետ փոխկապակցված կազմակերպությունների կողմից տրամադրվող կանխավճարները և վարկերը ևս ներկայացվեն առաջին նախադասության մեջ նշված տեղեկությունների հետ:

▼M4

14. Եթե ֆինանսական գործիքների՝ արդար արժեքով գնահատումը կիրառվել է 78/660/ԵՏՀ հրահանգի 7ա բաժնին համապատասխան՝

ա) գնահատման մոդելների և եղանակների հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, եթե արդար արժեքները որոշվել են այդ հրահանգի 42բ(1)բ) հոդվածին համապատասխան.

բ) ըստ ֆինանսական գործիքների խմբի, արդար արժեքը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ուղղակիորեն ներառված արժեքի փոփոխությունները, ինչպես նաև այդ հրահանգի 42գ հոդվածին համապատասխան՝ արդար արժեքի պահուստում ներառված փոփոխությունները.

գ) ածանցյալ ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի համար, գործիքների ծավալի և բնույթի մասին տեղեկություններ՝ ներառյալ էական ժամկետներն ու պայմանները, որոնք կարող են ազդել հետագա կանխիկի հոսքերի չափի, ժամանակի և որոշակիության վրա, և

դ) աղյուսակ, որը ցույց է տալիս ֆինանսական տարվա ընթացքում արդար արժեքի պահուստում շարժերը:

15. Եթե ֆինանսական գործիքների՝ արդար արժեքով գնահատումը չի կիրառվել 78/660/ԵՏՀ հրահանգի 7ա բաժնին համապատասխան՝

ա) ածանցյալ գործիքների յուրաքանչյուր դասի համար,

i) գործիքների արդար արժեքը, եթե այդ արժեքը կարող է որոշվել այդ հրահանգի 42բ(1) հոդվածով սահմանված մեթոդներից որևէ մեկով.

ii) գործիքների ծավալի և բնույթի մասին տեղեկություններ, և

բ) հիմնական ֆինանսական ակտիվների համար, որոնց վրա տարածվում է այդ հրահանգի 42ա հոդվածը, արտահայտված իրենց արդար արժեքը գերազանցող չափով և առանց օգտվելու այդ հրահանգի 35(1)գ)(աա) հոդվածին համապատասխան արժեքի ճշգրտում կատարելու հնարավորությունից.

i) առանձին ակտիվների կամ այդ առանձին ակտիվների համապատասխան խմբերի հաշվեկշռային արժեքը և արդար արժեքը.

ii) հաշվեկշռային արժեքը չնվազեցնելու հիմնավորումները՝ ներառյալ ապացույցների բնույթը, որոնք հիմք են այն համոզմունքի համար, որ հաշվեկշռային արժեքը կվերականգնվի:

▼M6

16. Առանձին–առանձին՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի համար պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից ֆինանսական տարվա համար գանձված ընդհանուր վճարները, այլ հավաստիացման ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները, հարկային ոլորտի խորհրդատվական ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները և այլ՝ ոչ աուդիտորական ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները:

▼B

Հոդված 35

1. Անդամ պետությունը կարող է թույլ տալ, որ 34(2), (3), (4) և (5) հոդվածում սահմանված բացահայտումները՝

ա) արվեն հայտարարության ձևով՝ մուտքագրված 68/151/ԵՏՀ հրահանգի 3(1) և (2) հոդվածին համապատասխան. դա պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում.

բ) բաց թողնվեն այն դեպքերում, երբ դրանց բնույթն այնպիսին է, որ դրանք լրջորեն կվնասեն այն կազմակերպություններից որևէ մեկին, որոնց վրա ազդում են այդ դրույթները: Անդամ պետությունը կարող է սահմանել, որ նման բացթողումների համար վարչական կամ դատական կարգով նախապես տրված թույլտվություն է անհրաժեշտ: Ցանկացած նման բացթողում պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. 1(բ) պարբերությունը կիրառվում է նաև 34(8) հոդվածով սահմանված տեղեկատվության նկատմամբ:

ԲԱԺԻՆ 3

Համախմբված տարեկան զեկույցը

Հոդված 36

▼M5

1. Համախմբված տարեկան զեկույցը պետք է առնվազն ներառի համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության գործունեության զարգացման և կատարողականի, ինչպես նաև վիճակի արդարացի դիտարկումը, ինչպես նաև նրանց սպառնացող հիմնական ռիսկերի ու անորոշությունների նկարագրությունը:

▼M5

Դիտարկումը պետք է լինի համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության գործունեության զարգացման և կատարողականի, ինչպես նաև վիճակի հավասարակշռված և համապարփակ վերլուծությունը՝ գործունեության չափերին և բարդությանը համապատասխան: Այդպիսի զարգացման, կատարողականի կամ վիճակի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ չափով՝ վերլուծությունը պետք է ներառի կատարողականի ֆինանսական և, անհրաժեշտության դեպքում, ոչ ֆինանսական առանցքային ցուցանիշներ՝ որոշակի գործունեության առնչությամբ՝ ներառյալ շրջակա միջավայրի և աշխատողների հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկությունները:

Վերլուծությունը ներկայացնելիս համախմբված տարեկան զեկույցը պետք է, անհրաժեշտության դեպքում, հղումներ ներառի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներին և լրացուցիչ բացատրություններ ներկայացնի դրանց մասին:

▼B

2. Այդ կազմակերպությունների առումով՝ զեկույցում նշվում են նաև.

- ա) ֆինանսական տարվա ավարտից ի վեր տեղի ունեցած կարևոր իրադարձությունները,
- բ) այդ կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության հնարավոր հետագա զարգացումը,
- գ) այդ կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության գործունեությունը գիտահետազոտական և փորձարարական նախագծման աշխատանքների բնագավառում,
- դ) մայր կազմակերպության՝ մայր կազմակերպությանը, մայր կազմակերպության դուստր կազմակերպություններին կամ իր անունից, սակայն ի շահ այդ կազմակերպությունների գործող անձին պատկանող բոլոր բաժնետոմսերի թիվը և անվանական արժեքը, իսկ անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքը: Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ այդ մանրամասների բացահայտումը ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում,

▼M4

- ե) կազմակերպության կողմից ֆինանսական գործիքների օգտագործման կապակցությամբ և ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի գնահատման համար էական նշանակություն ունենալու դեպքում.
 - կազմակերպությունների՝ ֆինանսական ռիսկի կառավարման նպատակներն ու քաղաքականությունները՝ ներառյալ կանխատեսված գործարքի յուրաքանչյուր հիմնական տեսակի հեջավորմանն ուղղված քաղաքականությունը, որի համար կիրառվում է հեջավորման հաշվապահական հաշվառումը, և
 - սպառնացող գնային ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը և կանխիկի հոսքի ռիսկը,

▼M7

- զ) խմբի ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի հիմնական առանձնահատկությունների նկարագրությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացի առումով, եթե կազմակերպության արժեթղթերի վաճառքը թույլատրվում է «Ֆինանսական գործիքների շուկաների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/39/ԵՇ հրահանգի (7) 4(1)(14) հոդվածի իմաստով կարգավորվող շուկայում: Եթե համախմբված տարեկան զեկույցը և տարեկան զեկույցը ներկայացվում են որպես մեկ ընդհանուր զեկույց, այդ տեղեկությունները պետք է ներկայացվեն զեկույցի այն մասում, որում ներառված է կորպորատիվ կառավարման հաշվետվությունը, ինչպես նախատեսված է 78/660/ԵՏՀ հրահանգի 46ա հոդվածով:

Եթե անդամ պետությունը թույլատրում է, որ 78/660/ԵՏՀ հրահանգի 46ա հոդվածի 1-ին պարբերությամբ պահանջվող տեղեկությունները նշվեն այդ հրահանգի 47-րդ հոդվածով սահմանված կարգով՝ տարեկան զեկույցի հետ հրապարակված առանձին զեկույցում, առաջին ենթապարբերությամբ նախատեսված տեղեկությունները նույնպես պետք է այդ առանձին զեկույցի մասը կազմեն: Կիրառվում է սույն Հրահանգի 37(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը:

▼M5

- 3. Եթե տարեկան զեկույցից բացի պահանջվում է նաև համախմբված տարեկան զեկույց, երկու զեկույցը կարող է ներկայացվել որպես մեկ ընդհանուր զեկույց: Այդպիսի ընդհանուր զեկույց կազմելիս անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել այն հարցերին, որոնք

էական են համախմբման մեջ ընդգրկված կազմակերպությունների՝ որպես մեկ ամբողջության համար:

▼M7

ԲԱԺԻՆ 3Ա

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն ու համախմբված տարեկան զեկույցը կազմելու և հրապարակելու պարտականությունն ու դրանց համար պատասխանատվությունը

Հոդված 36ա

Անդամ պետություններն ապահովում են, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները և համախմբված տարեկան զեկույցը կազմող կազմակերպությունների վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամները համատեղ պարտականություն ունենան ապահովելու, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, համախմբված տարեկան զեկույցը և, առանձին ներկայացվելու դեպքում, 78/660/ԵՏՀ հրահանգի 46ա հոդվածի համաձայն ներկայացվող կորպորատիվ կառավարման հաշվետվությունը կազմվեն և հրապարակվեն սույն Հրահանգի պահանջներին համապատասխան, և, եթե կիրառելի է, «Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 19-ի թիվ 1606/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն ընդունված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան (8): Այդ մարմինները գործում են ազգային իրավունքով իրենց վերապահված իրավասությունների շրջանակում:

Հոդված 36բ

Անդամ պետություններն ապահովում են, որ պատասխանատվության վերաբերյալ իրենց օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը կիրառվեն 36ա հոդվածում նշված վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամների նկատմամբ, առնվազն՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող կազմակերպության նկատմամբ՝ 36ա հոդվածով նշված պարտականությունը խախտելու համար:

▼B

ԲԱԺԻՆ 4

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

▼M5

Հոդված 37

1. Ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկվեն մեկ կամ մի քանի անձանց կողմից, որոնք պարտադիր աուդիտ իրականացնելու համար հաստատվել են Խորհրդի 1984 թվականի ապրիլի 10-ի «Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու համար պատասխանատու անձանց հաստատման մասին» 84/253/ԵՏՀ ութերորդ հրահանգի հիման վրա (11) այն անդամ պետությունների կողմից, որոնց իրավական ակտերը տարածվում են մայր կազմակերպության վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձը կամ անձինք (այսուհետ՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք) կարծիք են արտահայտում նաև միևնույն ֆինանսական տարվա կտրվածքով ներկայացված

համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ համախմբված տարեկան զեկույցի համապատասխանության կամ ոչ համապատասխանության վերաբերյալ:

2. Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաշվետվությունը պետք է ներառի.

- ա) ներածություն, որի մեջ առնվազն ներկայացվում են պարտադիր աուդիտի առարկա համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև դրանք կազմելու համար կիրառված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու մեխանիզմը,
- բ) պարտադիր աուդիտի շրջանակների նկարագրությունը, որն առնվազն նշում է այն աուդիտորական ստանդարտները, որոնց համաձայն իրականացվել է պարտադիր աուդիտը,
- գ) աուդիտորական կարծիք, որում հստակ նշվում է պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կարծիքն այն մասին, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են ճշմարիտ և իրական պատկեր՝ ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համապատասխան մեխանիզմի համաձայն և, անհրաժեշտության դեպքում, այն մասին, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են սահմանված պահանջներին. աուդիտորական կարծիքը լինում է դրական, վերապահումներով դրական, բացասական, կամ եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձինք չեն կարող արտահայտել աուդիտորական կարծիք՝ հրաժարում կարծիք արտահայտելուց,
- դ) հղում այն հարցերին, որոնց վրա պարտադիր աուդիտ իրականացնող անձինք ուշադրություն են հրավիրում՝ դրանք ընդգծելով՝ առանց վերապահումներով աուդիտորական կարծիք արտահայտելու,
- ե) կարծիք՝ միևնույն ֆինանսական տարվա կտրվածքով ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ համախմբված զեկույցի համապատասխանության կամ ոչ համապատասխանության վերաբերյալ:

3. Հաշվետվությունը ստորագրվում և թվագրվում է պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կողմից:

4. Եթե մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունները կցվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, սույն հոդվածով պահանջվող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաշվետվությունը կարող է զուգորդվել պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կողմից մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին ներկայացվող, 78/660/ԵՏՀ հրահանգի 51-րդ հոդվածով պահանջվող հաշվետվության հետ:

▼B

ԲԱԺԻՆ 5

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը

Հոդված 38

1. Պատշաճ կերպով հաստատված՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները և համախմբված տարեկան զեկույցը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու համար պատասխանատու անձի կողմից ներկայացված կարծիքի հետ հրապարակվում են այն կազմակերպության համար, որը կազմել է համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես սահմանված է այն անդամ պետության

իրավական ակտերով, որոնք տարածվում են դրա վրա՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան:

2. 78/660/ԵՏՀ հրահանգի 47(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը կիրառվում է համախմբված տարեկան զեկույցի նկատմամբ:

3. Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 47(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությանը՝ «Դիմումի հիման վրա պետք է հնարավորություն ընձեռնվի ձեռք բերել ցանկացած նման զեկույցի՝ ամբողջությամբ կամ դրա մի մասի պատճենը: Այդ պատճենի արժեքը չպետք է գերազանցի դրա համար կատարված վարչական ծախսը»:

4. Այնուամենայնիվ, եթե համախմբված ֆինանսական հաշվետվությունը կազմած կազմակերպությունը հիմնադրված չէ որպես 4-րդ հոդվածում թվարկված ընկերության տեսակներից որևէ մեկը, և նրանից իր ազգային իրավունքով չի պահանջվում հրապարակել 1-ին պարբերությունում նշված փաստաթղթերը, նույն կարգով, ինչ սահմանված է 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածով, այն առնվազն պետք է իր գլխավոր գրասենյակում դրանք մատչելի դարձնի հանրության համար: Այդ փաստաթղթերի պատճենը ձեռք բերելու հնարավորություն պետք է ընձեռնվի դիմումի հիման վրա: Այդ պատճենի արժեքը չպետք է գերազանցի դրա համար կատարված վարչական ծախսը:

5. Կիրառվում են 78/660/ԵՏՀ հրահանգի 48-րդ և 49-րդ հոդվածները:

6. Անդամ պետությունները սույն հոդվածով սահմանված հրապարակման պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության համապատասխան միջոցներ են նախատեսում:

▼M5

7. 2-րդ և 3-րդ պարբերությունները չեն կիրառվում այնպիսի ընկերությունների նկատմամբ, որոնց արժեթղթերի վաճառքը թույլատրվում է որևէ անդամ պետության՝ 93/22/ԵՏՀ հրահանգի 1(13) հոդվածի իմաստով կարգավորվող շուկայում:

▼M2

Հոդված 38ա

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել այն արժույթով, որոնցով դրանք կազմվել են և ԵԱՄ-ով՝ համախմբված հաշվապահական հաշվեկշռի կազմման ամսաթվի դրությամբ առավել լայն կիրառվող փոխարժեքով: Այդ փոխարժեքը բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

▼B

ԲԱԺԻՆ 6

Անցումային և եզրափակիչ դրույթներ

Հոդված 39

1. Եթե համախմբված ֆինանսական հաշվետվությունները, սույն Հրահանգին համապատասխան, կազմվում են առաջին անգամ՝ կազմակերպությունների խմբի համար, որը 1(1) հոդվածում նկարագրված կարգով արդեն կապված է՝ նախքան 49(1) հոդվածում նշված դրույթների կիրառումը, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ 19(1) հոդվածի նպատակների համար հաշվի առնվի սեփականության օբյեկտի հաշվեկշռային արժեքը և կապիտալի ու պահուստների այն մասը, որը դա ներկայացնում է առաջին համախմբման կամ դրան նախորդող որևէ ամսաթվի դրությամբ:

2. Վերը նշված 1-ին պարբերությունը, 33(2) հոդվածի նպատակներից ելնելով, *համապատասխան փոփոխություններով* կիրառվում է սեփականության օբյեկտի և համախմբման մեջ ընդգրկված կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կապիտալի ու պահուստների՝ դրա ներկայացրած մասի և 32-րդ հոդվածում նշված համամասնական համախմբման նկատմամբ:

3. Եթե 19(1) հոդվածով սահմանված առանձին հոդվածը համապատասխանում է համախմբման դրական տարբերությանը, որն առաջացել է՝ նախքան սույն Հրահանգին համապատասխան կազմված առաջին համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթիվը, անդամ պետությունը կարող է.

ա) 30(1) հոդվածի նպատակներից ելնելով՝ թույլ տալ 78/660/ԵՏՀ հրահանգի 37(2) հոդվածով նախատեսված հինգ տարուց ավելի սահմանափակ ժամանակահատվածի հաշվարկումը՝ սկսած սույն Հրահանգին համապատասխան կազմված առաջին համախմբված ֆինանսական հաշվետվության կազմման ամսաթվից, և

բ) 30(2) հոդվածի նպատակներից ելնելով՝ թույլ տալ սույն Հրահանգին համապատասխան կազմված առաջին համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթվի դրությամբ պահուստներից իրականացվելիք մասհանումը:

Հոդված 40

1. Մինչև բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ու ապահովագրական կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները կարգավորող կանոնների ներդաշնակեցման մասով 78/660/ԵՏՀ հրահանգը լրացնող հրահանգների՝ ազգային իրավունքում կիրառման համար սահմանված վերջնաժամկետի ավարտը, անդամ պետությունը կարող է շեղում կատարել սույն Հրահանգի՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքի, այդ հաշվետվություններում ընդգրկված հոդվածների գնահատման մեթոդների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկությունների վերաբերյալ դրույթներից.

ա) համախմբման ենթակա ցանկացած կազմակերպության առնչությամբ, որը բանկ, այլ ֆինանսական հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն է,

բ) եթե համախմբման ենթակա կազմակերպությունները հիմնականում ներառում են բանկեր, ֆինանսական հաստատություններ կամ ապահովագրական կազմակերպություններ:

Նրանք կարող են շեղում կատարել նաև 6-րդ հոդվածից, սակայն միայն այնքանով, որքանով դա առնչվում է վերը նշված կազմակերպությունների նկատմամբ կիրառվող սահմանաչափերին ու չափորոշիչներին:

2. Այնքանով, որքանով անդամ պետությունը չի պահանջել, որպեսզի բանկ, այլ ֆինանսական հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն հանդիսացող բոլոր կազմակերպությունները համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմեն՝ նախքան 49(1) հոդվածում նշված դրույթների կիրարկումը, մինչև իր ազգային իրավունքում վերը նշված 1-ին պարբերությունում հիշատակված հրահանգներից մեկի կիրարկումը, ինչը սակայն չի վերաբերում 1993 թվականից հետո ավարտվող ֆինանսական տարիներին, այն կարող է.

ա) կասեցնել 1(1) հոդվածով սահմանված պարտականության կիրառումը վերը նշված՝ մայր կազմակերպություն հանդիսացող կազմակերպությունների առնչությամբ: Այդ փաստը պետք է բացահայտվի մայր կազմակերպության տարեկան ֆինանսական

հաշվետվություններում, և 78/660/ԵՏՀ հրահանգի 43(1) հոդվածի 2-րդ կետով սահմանված տեղեկությունները պետք է ներկայացվեն բոլոր դուստր կազմակերպությունների համար.

բ) եթե համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմված են և, չհակասելով 33-րդ հոդվածին, թույլ են տալիս վերը նշված՝ դուստր կազմակերպություն հանդիսացող կազմակերպություններից որևէ մեկի բացառումը համախմբումից: Ցանկացած այդպիսի դուստր կազմակերպության առնչությամբ 34(2) հոդվածով սահմանված տեղեկությունները պետք է ներկայացվեն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3. Վերը նշված 2(բ) պարբերությունում նշված դեպքերում դուստր կազմակերպության տարեկան կամ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է այնքանով, որքանով դրանց հրապարակումը պարտադիր է, ներկայացվեն մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից, իսկ համախմբված ֆինանսական հաշվետվությունների բացակայության դեպքում՝ մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից, կամ դրանք պետք է մատչելի դարձվեն հանրությանը: Վերջին դեպքում այդպիսի փաստաթղթերի պատճենը ձեռք բերելու հնարավորություն պետք է ընձեռնվի դիմումի հիման վրա: Այդ պատճենի արժեքը չպետք է գերազանցի դրա համար կատարված վարչական ծախսը:

Հոդված 41

1. 1(1)(ա), (բ) և (դ)(բբ) հոդվածում նկարագրված կարգով կապված կազմակերպությունները և այլ կազմակերպություններ, որոնք նույն ձևով կապված են վերը նշված կազմակերպություններից մեկի հետ, դուստր կազմակերպություններ են՝ սույն Հրահանգի և 78/660/ԵՏՀ հրահանգի նպատակներով:

▼M7

1ա. «Կապակցված անձ»-ը նույն իմաստն ունի, ինչ թիվ 1606/2002 կանոնակարգին համապատասխան ընդունված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներում:

▼B

2. Եթե անդամ պետությունը սահմանում է 1(1)(գ), (դ)(աա) կամ (2) հոդվածի կամ 12(1) հոդվածի համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմումը, այդ հոդվածներում նկարագրված կարգով միմյանց հետ կապված կազմակերպությունները և այլ կազմակերպություններ, որոնք նույն ձևով կամ վերը նշված 1-ին պարբերությունում սահմանված կարգով կապված են վերը նշված կազմակերպություններից որևէ մեկի հետ, փոխկապակցված կազմակերպություններ են, ինչպես սահմանված է 1-ին պարբերությամբ:

3. Նույնիսկ եթե անդամ պետությունը չի սահմանում համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում՝ 1(1)(գ), (դ)(աա) կամ (2) հոդվածի կամ 12(1) հոդվածի համաձայն, այն կարող է կիրառել սույն հոդվածի 2-րդ պարբերությունը:

4. Կիրառվում են 2-րդ և 3(2) հոդվածները:

5. Եթե անդամ պետությունը կիրառում է 4(2) հոդվածը, այն կարող է 1-ին պարբերությունը չկիրառել վերը նշված փոխկապակցված կազմակերպությունների նկատմամբ, որոնք մայր կազմակերպություններ են և որոնցից, ելնելով դրանց իրավական ձևից, այդ անդամ պետությունը չի պահանջում համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում՝ սույն Հրահանգի դրույթներին համապատասխան, ինչպես նաև նմանատիպ իրավական ձև ունեցող մայր կազմակերպությունների նկատմամբ:

Հոդված 42

Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 56-րդ հոդվածին:

«Հոդված 56

1. 9-րդ, 10-րդ և 23-26-րդ հոդվածներով սահմանված հոդվածները տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացնելու պարտականությունը, որոնք վերաբերում են 83/349/ԵՏՀ հրահանգի 41-րդ հոդվածով սահմանված փոխկապակցված կազմակերպություններին, և այդ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը՝ 13(2), 14-րդ հոդվածների և 43(1) հոդվածի 7-րդ կետին համապատասխան, ուժի մեջ է մտնում այդ հրահանգի 49(2) հոդվածով սահմանված ամսաթվին:

2. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում նաև բացահայտվում է.

- ա) կազմակերպությունների այն ամենամեծ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, որի մաս է կազմում ընկերությունը՝ որպես դուստր կազմակերպություն,
- բ) կազմակերպությունների այն ամենափոքր խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, որի մաս է կազմում ընկերությունը՝ որպես դուստր կազմակերպություն և որը նաև ընդգրկված է վերը նշված (ա)–ում նշված կազմակերպությունների խմբի մեջ,
- գ) այն վայրը, որտեղ կարելի է ձեռք բերել վերը նշված (ա) և (բ)–ում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատճենները՝ դրանց առկայության դեպքում»:

Հոդված 43

Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 57-րդ հոդվածին՝

«Հոդված 57

Անկախ 68/151/ԵՏՀ և 77/91/ԵՏՀ հրահանգների դրույթներից՝ անդամ պետությունը կարող է չկիրառել սույն Հրահանգի՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների բովանդակության, աուդիտի և հրապարակման վերաբերյալ դրույթները այն ընկերությունների նկատմամբ, որոնց վրա տարածվում է նրանց ազգային իրավունքը, և որոնք, ինչպես սահմանված է 83/349/ԵՏՀ հրահանգով, դուստր կազմակերպություն են, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

- ա) մայր կազմակերպության նկատմամբ պետք է տարածվեն անդամ պետության իրավական ակտերը.
- բ) դուստր կազմակերպության բոլոր բաժնետերերը կամ մասնակիցները պետք է հայտարարած լինեն նման պարտականությունից ազատվելու համար իրենց համաձայնության մասին, և այդ հայտարարությունը պետք է արվի յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար.
- գ) մայր կազմակերպությունը պետք է հայտարարած լինի, որ այն երաշխավորում է դուստր կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը.
- դ) (բ)–ում և (գ)–ում նշված հայտարարությունները պետք է հրապարակվեն դուստր կազմակերպության կողմից, ինչպես սահմանված է անդամ պետության իրավական ակտերով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան.

- ե) դուստր կազմակերպությունը պետք է ընդգրկվի մայր կազմակերպության կողմից 83/349/ԵՏՀ հրահանգին համապատասխան կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններում.
- զ) վերը նշված ազատումը պետք է բացահայտվի մայր կազմակերպության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում.
- է) (ե) կետում նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, համախմբված տարեկան զեկույցը և այդ հաշվետվությունների աուդիտ իրականացնելու համար պատասխանատու անձի հաշվետվությունը պետք է հրապարակվեն դուստր կազմակերպության համար, ինչպես սահմանված է անդամ պետության իրավական ակտերով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3–րդ հոդվածին համապատասխան:»:

Հոդված 44

Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 58–րդ հոդվածին՝

▼B

«Հոդված 58

Անդամ պետությունը կարող է չկիրառել սույն Հրահանգի՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների աուդիտի և հրապարակման վերաբերյալ դրույթները այն ընկերությունների նկատմամբ, որոնց վրա տարածվում է նրանց ազգային իրավունքը և որոնք մայր կազմակերպություններ են՝ ելնելով 83/349/ԵՏՀ հրահանգի նպատակներից, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

- ա) մայր կազմակերպությունը պետք է կազմի համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ 83/349/ԵՏՀ հրահանգին համապատասխան և ընդգրկվի համախմբված ֆինանսական հաշվետվություններում.
- բ) վերը նշված ազատումը պետք է բացահայտվի մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում.
- գ) վերը նշված ազատումը պետք է բացահայտվի մայր կազմակերպության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում.
- դ) մայր ընկերության՝ սույն Հրահանգին համապատասխան որոշվող շահույթը կամ վնասը, պետք է ներկայացվի մայր ընկերության հաշվապահական հաշվեկշռում:»:

Հոդված 45

Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 59–րդ հոդվածին՝

«Հոդված 59

1. Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ 17–րդ հոդվածով սահմանված մասնակցության մասնաբաժինները այն կազմակերպությունների կապիտալում, որոնց ընթացիկ և ֆինանսական քաղաքականությունները զգալի ազդեցության են ենթարկվում, արտահայտված լինեն հաշվեկշռում՝ ստորև նշված 2–9–րդ պարբերությունների համաձայն, որպես «դուստր կազմակերպություններում բաժնետոմսեր» կամ «մասնակցության շահեր» հոդվածների ենթահոդվածներ՝ ելնելով հանգամանքներից: Մի կազմակերպության կողմից մեկ այլ կազմակերպության վրա ունեցած ազդեցությունը զգալի է համարվում, եթե այն տվյալ

կազմակերպությունում ունի բաժնետերերի կամ մասնակիցների ձայնի իրավունքների 20 տոկոսը կամ ավելին: Կիրառվում է 83/349/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածը:

2. Եթե սույն հոդվածը առաջին անգամ է կիրառվում վերը նշված 1-ին պարբերությամբ կարգավորվող մասնակցության շահի նկատմամբ, այդ մասնակցության շահը ներկայացվում է համախմբված հաշվեկշռում կամ

ա) դրա հաշվեկշռային արժեքով՝ հաշվարկված 31-42-րդ հոդվածներին համապատասխան: Այդ արժեքի և կապիտալի ու պահուստների՝ մասնակցության այդ շահով ներկայացված մասնաբաժնին համապատասխանող գումարի միջև տարբերությունը առանձին արտացոլվում է համախմբված հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ, երբ այդ մեթոդն առաջին անգամ է կիրառվում, կամ

բ) կապիտալի և պահուստների՝ մասնակցության այդ շահով ներկայացված մասնաբաժնին համապատասխանող գումարով: Այդ գումարի և 31-42-րդ հոդվածների համապատասխան հաշվարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունն առանձին արտացոլվում է համախմբված հաշվեկշռում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ, երբ այդ մեթոդն առաջին անգամ է կիրառվում.

գ) անդամ պետությունը կարող է սահմանել վերը նշված պարբերություններից որևէ մեկի կիրառումը: Հաշվապահական հաշվեկշռում կամ ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններում պետք է նշվի՝ արդյոք կիրառվել է վերը նշված (ա)–ն թե (բ)–ն.

դ) բացի դրանից՝ վերը նշված (ա) և (բ) կետերը կիրառելիս անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ այդ տարբերության հաշվարկումը 1-ին պարբերությունում նշված մասնակցության մասնաբաժնի ձեռքբերման ամսաթվի դրությամբ կամ երկու կամ ավելի փուլերով ձեռքբերման դեպքում՝ սեփականության օբյեկտը վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժնի վերածվելու ամսաթվի դրությամբ:

▼ B

3. Եթե այն կազմակերպության ակտիվները կամ պարտավորությունները, որում վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժին է պատկանում, գնահատվել են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմող ընկերության կողմից կիրառված մեթոդներից բացի այլ մեթոդներով, դրանք վերը նշված 2 (ա) կամ (բ) պարբերությունում նշված տարբերությունը հաշվարկելու նպատակով կարող են վերագնահատվել՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմող ընկերության կողմից կիրառվող մեթոդների համաձայն: Եթե նման վերագնահատում չի իրականացվել, դա պետք է բացահայտվի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Անդամ պետությունը կարող է նման վերագնահատում պահանջել:

4. Վերը նշված 2-րդ պարբերությունում նշված հաշվեկշռային արժեքը կամ վերը նշված 2(բ) պարբերությունում նշված՝ կապիտալի ու պահուստների մասին համապատասխանող գումարն ավելացվում կամ նվազեցվում է ֆինանսական տարվա ընթացքում կապիտալի և պահուստների՝ մասնակցության այդ մասնաբաժնով ներկայացված մասում տեղի ունեցած փոփոխության չափով. այն նվազեցվում է մասնակցության այդ մասնաբաժնի հետ կապված շահութաբաժինների գումարով:

5. Այնքանով, որքանով վերը նշված 2(ա) կամ (բ) պարբերությամբ նախատեսված դրական տարբերությունը չի կարող կապվել ակտիվների կամ պարտավորությունների որևէ խմբի հետ, այն պետք է դիտարկվի «գուղվի» հոդվածի նկատմամբ կիրառելի կանոններին համապատասխան:

6. ա) Վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժիններին վերագրվող շահույթի կամ վնասի չափը ներկայացվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված:
- բ) Այն դեպքերում, երբ այդ գումարը գերազանցում է շահութաբաժինների գումարը, որն արդեն ստացվել է կամ որի վճարման պահանջ կարող է ներկայացվել, այդ տարբերության գումարը պետք է փոխանցվի պահուստ, որը չի կարող բաշխվել բաժնետերերի միջև:
- գ) Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ վերը նշված 1-ին պարբերությունում նշված մասնակցության մասնաբաժիններին վերագրվող շահույթի կամ վնասի չափը ներկայացվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում միայն այն գումարի սահմաններում, որը համապատասխանում է շահութաբաժիններին, որոնք արդեն ստացվել են կամ որոնց վճարման պահանջ կարող է ներկայացվել:
7. 83/349/ԵՏՀ հրահանգի 26(1)(գ) հոդվածում նշված բացառումներն իրականացվում են այնքանով, որքանով փաստերը հայտնի են կամ կարող են հաստատվել: Կիրառվում է այդ հրահանգի 26(2) և (3) հոդվածը:
8. Եթե այն կազմակերպությունը, որում վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժին է պատկանում, կազմում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ, նախորդ պարբերությունները կիրառվում են նման համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված կապիտալի ու պահուստների նկատմամբ:
9. Սույն հոդվածը կարող է չկիրառվել, եթե վերը նշված 1-ին պարբերությամբ սահմանված մասնակցության մասնաբաժինն էական չէ՝ 2(3) հոդվածի նպատակներից ելնելով:»:

Հոդված 46

Հետևյալը փոխարինում է 78/660/ԵՏՀ հրահանգի 61-րդ հոդվածին՝

«Հոդված 61

Անդամ պետությունը կարող է չկիրառել սույն Հրահանգի՝ համապատասխան կազմակերպությունների կապիտալի և պահուստների և շահույթի ու վնասների չափին վերաբերող 43(1) հոդվածի 2-րդ կետի դրույթները այն ընկերությունների նկատմամբ, որոնց վրա տարածվում է նրանց ազգային իրավունքը, և որոնք մայր կազմակերպություններ են՝ 83/349/ԵՏՀ հրահանգի նպատակներից ելնելով.

ա) եթե համապատասխան կազմակերպություններն ընդգրկված են այդ մայր կազմակերպության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններում կամ կազմակերպությունների ավելի մեծ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, ինչպես նշված է 83/349/ԵՏՀ հրահանգի 7(2) հոդվածում կամ

▼ B

բ) եթե համապատասխան կազմակերպություններում սեփականության օբյեկտներին անդրադարձ է կատարվել մայր կազմակերպության կողմից դրա տարեկան ֆինանսական հաշվետվություններում՝ 59-րդ հոդվածին համապատասխան, կամ այդ մայր

կազմակերպության կողմից 83/349/ԵՏՀ հրահանգի 33-րդ հոդվածին համապատասխան կազմված՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում:»:

Հոդված 47

78/660/ԵՏՀ հրահանգի 52-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Փոխադարձ կապն ապահովող կոմիտեն՝

- ա) չհակասելով Պայմանագրի 169-րդ և 170-րդ հոդվածներին՝ նպաստում է նաև սույն Հրահանգի ներդաշնակեցված կիրառմանը կանոնավոր հանդիպումների միջոցով, որի ընթացքում, մասնավորապես, շոշափվում են դրա կիրառման հետ կապված գործնական խնդիրներ.
- բ) անհրաժեշտության դեպքում, սույն Հրահանգում լրացումների կամ փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում Հանձնաժողովին:

▼M1

▼M7

Հոդված 48

Անդամ պետությունները պետք է սահմանեն սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցների վերաբերյալ կանոններ և ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրարկումն ապահովելու համար: Նախատեսված պատասխանատվության միջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

▼B

Հոդված 49

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 1988 թվականի հունվարի 1-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Անդամ պետությունը կարող է նախատեսել, որ վերը նշված 1-ին պարբերությունում նշված դրույթները նախնառաջ կիրառվում են 1990 թվականի հունվարի 1-ից սկսվող ֆինանսական տարիների կտրվածքով կամ 1990 թվականի ընթացքում կազմված համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:
3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ Հանձնաժողովին ներկայացվեն իրենց կողմից սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում ընդունվող ազգային իրավունքի հիմնական ակտերի տեքստերը:

Հոդված 50

1. 49(2) հոդվածում նշված ամսաթվից հինգ տարի հետո Խորհուրդը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, ուսումնասիրում և, ըստ անհրաժեշտության, վերանայում է 1(1)(դ) (երկրորդ ենթապարբերությունը), 4(2), 5-րդ, 6-րդ, 7(1), 12-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածները՝ ելնելով սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձից, սույն Հրահանգի նպատակներից և տվյալ ժամանակաշրջանում տնտեսական ու արժույթային իրավիճակից:

2. Վերը նշված 1-ին պարբերությունը չի ազդում 78/660/ԵՏՀ հրահանգի 53(2) հոդվածի վրա:

▼M4

Հոդված 50ա

Ոչ ուշ, քան մինչև 2007 թվականի հունվարի 1-ը, Հանձնաժողովը վերանայում է 29(1) 34(10), (14) և (15) և 36(2)(ե) հոդվածների դրույթները՝ ելնելով արդար արժեքի վրա հիմնված հաշվապահական հաշվառման մասին դրույթների կիրառման արդյունքում ձեռք բերված փորձից և հաշվի առնելով հաշվապահական հաշվառման ոլորտում գրանցված միջազգային զարգացումները և, անհրաժեշտության դեպքում, առաջարկ ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ վերը նշված հոդվածները փոփոխելու նպատակով:

▼B

Հոդված 51

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

(1) ՊՏ թիվ C 121, 02.06.1976թ., էջ 2:

(2) ՊՏ թիվ C 163, 10.07.1978թ., էջ 60:

(3) ՊՏ թիվ C 75, 26.03.1977թ., էջ 5:

(4) ՊՏ թիվ L 222, 14.08.1978թ., էջ 11:

(5) ՊՏ L 141, 11.06.1993թ., էջ 27: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/87/ԵՀ հրահանգով (ՊՏ L 35, 11.02.2003թ., էջ 1) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

(6) ՊՏ թիվ L 26, 31.01.1977թ., էջ 1:

(7) ՊՏ L 145, 30.04.2004թ., էջ 1:

(8) ՊՏ L 243, 11.09.2002թ., էջ 1:

(9) ՊՏ L 126, 12.05.1984թ., էջ 20: